

ԷՋՄԻԱԾԻՆԸ ՌՌՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ
(1800—1828 pp.)

Հայ ժողովրդի պատմության նոր շրջանին վերաբերող այս կամ այն հարցը շոշափելիս, մասնավորապես հայ-ռուսական հարաբերությունները և նրանց ծագման ու զարգացման խնդիրները, սովետահայ պատմաբաններից շատերը հարակից կերպով անդրադարձել են նաև էջմիածնին, հոգևոր այդ կենտրոնի քաղաքական կողմնորոշմանը, նրա դերին և նշանակությանը: Այդ առումով, անկասկած, ուշադրով են ակադեմիկոսներ Ա. Գ. Հովհաննիսյանի, Ա. Ռ. Հովհաննիսյանի, Մ. Ներսիսյանի, պրոֆեսորներ Զ. Գրիգորյանի, Վ. Պարսամյանի և այլոց աշխատությունները¹: Այս հարցի վերաբերյալ ուրույն եզրակացությունների է հանգել Լեոն²:

էջմիածնի դերը մեր ժողովրդի պատմության մեջ զնահատվել է նաև օտար հեղինակների կողմից³: Այսուհանդերձ, էջմիածնի, որպես քաղաքական կենտրոնի, դերի ու նշանակության շատ հարցեր կարոտ են հանգամանորեն լուսաբանման: Այդ ուղղությամբ համեստ փորձերն էլ, անշուշտ, օգտակար կլինեն:

Սույն հոդվածում մենք ջանացել ենք կանդ առնել խնդրի քաղաքական կողմի վրա, թե ինչ ակնկալություններ են ունեցել, առհաս, Ռուսաստանն ու Պարսկաստանը (նաև Ֆրանսիան) էջմիած-

¹ Տե՛ս Армяно-русские отношения в XVIII веке, т. II, ч. I, под редакцией Ашота Иоаннисяна, Ереван, 1964, А. Р. Иоаннисян. Присоединение Закавказья к России и международная дипломатия в начале XIX столетия, Ереван, 1958, М. Нерсисян, Отечественная война 1812 г. и народы Закавказья, Ереван, 1960 г.

Դրիգորյան Զ., Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1960, Պարսամյան Վ., Յարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, 1940, Դեկարրիստները Հայաստանում, 1959:

² Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, ձեռագրի իրավունքով, մասն առաջին, Երևան, 1926, մասն երկրորդ, Երևան, 1927:

³ Տե՛ս Burtt J., The people of Ararat, London, 1926.

նի նկատմամբ, և ինչպիսի դիրքորոշում է ունեցել վերջինս մեզ հետաքրքրող ժամանակահատվածում, այն է՝ 1800—1828 թթ.:

Հայ հոգևոր կենտրոնի՝ էջմիածնի, դերը նշանակալից է եղել մեր ժողովրդի բազմադարյան պատմության մեջ, մասնավորապես Հայաստանում պետական իշխանության բացակայության շրջանում: Այն լինելով հոգևոր, ինչպես և քաղաքական կենտրոն, միաժամանակ ազդապահականության օրրան է դարձել դարեր շարունակ: Էջմիածնի այս նշանակությունը, իհարկե, անհասկանալի չի եղել Հայաստանի հարևան կամ նրա հետ այս կամ այն պատճառով հարաբերություն ունեցած երկրների պետական ու քաղաքական գործիչներին: Մեր ժողովրդի պատմությունը բազմաթիվ փաստեր է արձանագրել, որոնք պերճախոս վկայությունն են վերոգրյալի:

Հայտնի է, որ Շահ-Աբբասը 17-րդ դարի արշալույսին ռազմատարատեղիական նպատակներով անապատի վերածեց Արարատյան բարերի դաշտավայրը՝ բնակչության մեծ մասին բռնիով Պարսկաստանի խորքերը: Եվ շահի մայրաքաղաքի մոտ ստեղծվում է հայկական մի գաղութ, որը պարսից իրականության մեջ ունենալու էր տնտեսական կարևոր նշանակություն: Վկայություն կա այն մասին, որ Շահ-Աբբասը իր մոտ է կանչում հայ վաճառականներին ու իր գանձարանից առատ բաժին տալիս նրանց: Արբունիքի բարձրատեղձան մարդկանց հարցումին, թե շահը ինչու է դրամը տալիս օտարազավաններին, հեռատես արքան պատասխանում է. «Տալիս եմ նրանց, որ իմ գանձարանը կրկնակի լցվի»⁴:

Պարսկաստանի խորքում հայ տարրին ամուր պահելու տրամադրությունը շահի մոտ միտք է առաջացնում՝ քանդել էջմիածինը, հոգն ու բարը տեղափոխել Սպահան, այնտեղ կառուցել նորը. «... քանդի ի վերայ Աջոյն և էջմիածնի ամենայն ազգն հայոց կապելու կան»⁵:

Եվ եթե նրա գիտավորությունը չիրականացավ, պատճառը հայազգի խոջա նազարն էր, որ հանդգնեց ասել՝ «Թագաւոր ողջ կայցե, եթե կամք քս յօժարեացի շինել զէջմիածին գեղեցիկ և հաստատ, կարող ես յարժաթոյ և յոսկւոյ շինել, թող թե ի քարե. և զինչ հարկ է յաղազս քարի և հողոյ զայնքան աշխատութիւնս կրել, և զայնքան ծախս ծախսել ի վերայ նորա, որպէս զի հեռու է յօտար աշխարհէ քար և հող բերել: Բաւական և քարտք է այս աշխարհիս քարն և հողն, եթե կամիս շինել, սոքօք շինեա, և ընդունելի է մեզ»⁶:

4 Buxton N, Travel and politics in Armenia, London, 1914, էջ 185:

5 Պատմութիւն Առաքել Վարդապետի Դարիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 200:

6 Նույն տեղում, էջ 201:

Պարսկաստանի հետ էջմիածնի հարաբերությունները զոյություն են ունեցել երկար և ձիգ դարերի ընթացքում: Ինչ վերաբերում է Ռուսաստանի հետ ունեցած հարաբերություններին, ապա դրանք անհամեմատ ավելի ուշ են սկզբնավորվել: Կարապետ Եղյանը ենթադրում է, որ էջմիածնի Մայր աթոռի պաշտոնական հարաբերությունները ուսաց կառավարության հետ սկսվում են 18-րդ դարի երկրորդ կեսից, Եկատերինա 2-րդի օրոք⁷: Նույն միտքն է հայտնում Մ. Օրմանյանը, գրելով, թե՛ «Նույն ինքը Սիմէոն՝ եղա որ ուսական կառավարության հուանաւորությունն ստանալու համար առաջին հարաբերությունները հաստատեց»⁸: Սակայն ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը դեռևս 1915 թ. «Արարատում» հրատարակած իր մի հոդվածում էջմիածնի՝ ուսաց կառավարության հետ ունեցած հարաբերությունների սկզբնավորումն ավելի վաղ է համարել⁹: Աշոտ Հովհաննիսյանի հայտնաբերած խնդրագրի հեղինակը, ինչպես երևում է հոդվածի վերնագրից, Հակոբ Զուղայեցի կաթողիկոսն է (1655—1780 թթ.): Վերլուծելով խնդրագրի բովանդակությունը, Հովհաննիսյանը ժամանակին այն միտքն է հայտնել, թե «Հայաստանի քաղաքագետները կարող էին մտածել ուս դիւանագետների բարեացակամ միջնորդութիւնների մասին»¹⁰:

Հակոբ Զուղայեցու խնդրին գիտնականը նորից անդրադառնում է ավելի քան չորս տասնամյակ հետո. նա գրում է. «...չնայած որ իրանական կառավարության վրա ճնշում գործելու համար Զուղայեցին խնդրում էր Ռուսաստանի միջամտությունը, նա ևս երես չէր շուռ տալիս Արևմուտքից և հայերի բախտը չէր կապում բացառապես հյուսիսային մեծ պետության հետ: Զուղայեցու գործունեությունը օբյեկտիվորեն հող էր պատրաստում հայ ժողովրդի ազատագրական շարժման ուսական կողմնորոշման համար, սակայն ինքյան դեռ չէր հանդիսանում հայ ազատագրական մտքի քաղաքական արտահայտություն»¹¹:

7 Եղեան Կ., Ս. էջմիածնի Մայր աթոռի և ուսաց կառավարութեան յարաբերությունների ծագումը, Թիֆլիզ, 1905, էջ 3:

8 Օրմանյան Մ., Հայոց եկեղեցին և իր պատմությունը, Կ. Պոլիս, 1911, էջ 114:

9 Հովհաննիսյան Ա., Յակոբ Զուղայեցու մի գրութիւնը ուս արքունիքին, «Արարատ», 1915, էջ 775—781:

10 Նույն տեղում, էջ 779:

11 Հովհաննիսյան Ա., Հայերի ուսական կողմնորոշման նախապատմությունից, «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1, էջ 107:

Իրոք, ժողովրդի քաղաքական հակվածությունը՝ օրինակաբար ազդելի լայն հասկացողություն է. այն իր մեջ ընդգրկելով որոշ խավերի քաղաքական ակնկալությունները, ներառնում է նաև ողջ ժողովրդի կամ նրա մի հատվածի կենսական շահերն արտահայտող քաղաքական ըմբռնումը: Հակոբ Զուղայեցու ժամանակ պայմաններ չէին ստեղծվել այդ բանի համար: Խնդիրը այլ պատկեր է բուստանում Պետրոս Մեծի «կասպիական» արշավանքների ընթացքում, երբ հայ ժողովրդի համար ազատագրման հույսը մարմին է առնում, դառնում շոշափելի:

Քանի որ հարցը էջմիածնի հարաբերություններին է վերաբերում, ապա մեզ հետաքրքրում են այդ կենտրոնի ուսաց կառավարության հետ ունեցած սկզբնական հարաբերությունների այլ փաստեր կա:

1703 թ. փետրվարի 12-ի թվակիր մի վավերագիր վկայում է այն մասին, որ էջմիածնի կաթողիկոսը գրում է ամենուրեք՝ օրհնության աղոթք կարդալ ուսաց և նրա զորքի համար¹²: Մի այլ վավերագիր՝ Ալեքսանդր կաթողիկոսի կոնդակը (1709 թ. հուլիսի 7) Պետրոս Մեծին, որում խոսվում է Իսթայել Օրոս նկատմամբ ցուցաբերած սիրո ու ընդունելության մասին¹³: Սակայն, ինչպես նշում է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, հայ եկեղեցու առաջնորդի զգուշավորությունը ետ է պահում նրան այդ նամակում: Ռուսաստանի նկատմամբ իր քաղաքական համակրանքը արտահայտելուց՝ նման դիրքը հատկանշական է նաև Ալեքսանդրին հաջորդած մի շարք կաթողիկոսների համար¹⁴:

Այս պարագաներում ուսական արքունիքի հետ հարաբերությունները վարում էին գլխավորապես Գանձասարի կաթողիկոսները, որոնք բավականին անկախ էին պարսկական իշխանություններից¹⁵: Այդ չի նշանակում, որ նրանք այդ անում էին «օգուտ քաղելով էջմիածնի ընկճումը գրութիւնից», ինչպես նկատում է Կ. Եզլյանը¹⁶: Իր գործունեությամբ, անկասկած, Եսայի կաթողիկոսը Հասան-Ջալալյան մեծանուն տոհմի այս փալլուն ներկայացուցիչը, նպաստում էր հայ ազատագրական շարժմանն ու ուսաց ցարի

¹² Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898, стр. 143—144.

¹³ Эзов, *նշվ. աշխ.*, էջ 243—244:

¹⁴ Армяно-русские отношения в XVIII веке, т. II, ч. I, под редакцией Ашота Иоаннисяна, Ереван, 1964, стр. XXI.

¹⁵ Эзов, *նշվ. աշխատությունը*, էջ 12:

¹⁶ Եզլյան Կ., Ս. էջմիածնի Մայր Աթոռի և ուսաց կառավարության յարաբերությունների ծագումը, Թիֆլիս, 1904 (05), էջ 3:

հետ ունեցած հարաբերություններում ակնկալում էր հայրենի երկրի ազատագրումը: Պատահական չէ, որ Պետրոս Մեծը հայ ժողովրդին իր հովանավորության տակ ընդունելու հրովարտակը (10-ը նույնմբերի 1724 թ.) հղել է Եսայի կաթողիկոսին¹⁷:

Եթե այս (Պետրոսի) շրջանում ուսաց կառավարության հարաբերությունները հիմնականում Գանձասարի հետ էին, ապա Եկատերինա 2-րդի օրոք Ռուսաստանի համար էջմիածնի նշանակությունն ավելի գնահատելի է դառնում, և «Սիմեոն կաթողիկոսի ժամանակ ցարական կառավարության և էջմիածնի միջև հաստատվում են մոտիկ հարաբերություններ»¹⁸:

Ցարիզմը էջմիածնի հետ ունեցած հարաբերություններում մշտապես առաջնորդվել է քաղաքական որոշակի նպատակներով:

Մինչ Ղուկաս կաթողիկոսը (1780—1799) էջմիածնի հարաբերությունները Ռուսաստանի հետ զլխավորապես դիվանագիտական են եղել, իսկ նրա մահից հետո այն վեր է ածվում միջամտման քաղաքականության:

Իրոք, բարդ իրադրություն է ստեղծվում Ղուկասի մահից (1799 թ. 27/12) հետո: Խնդիրը վերաբերում էր նոր կաթողիկոսի ընտրությանը, որին նախորդելու էր թեկնածուների առաջադրումը: էջմիածնում առաջադրվում է Կ. Պոլսի հայոց պատրիարք Դանիել արքեպիսկոպոսի թեկնածությունը: Ռուսաստանի հայոց առաջնորդ Հովսեփ Երկայնաբազուկ-Արղությանի մասին էլ է խոսք լինում, ըստ ամենայնի խոսվում է նրա արժանիքների մասին, բայց խոսվում երկյուղով ու ափսոսանքով: Չէ՞ որ Հովսեփը «ոուս» մարդ էր, իսկ Մայր Աթոռի գահակալին հրովարտականը շնորհվելու էին պարսից շահի և Թուրքիայի սուլթանի կողմից: Թե՛ Պարսկաստանը և թե՛ Թուրքիան հազիվ թե բարեհաճ գտնվեին ուսնների համար այնքան օգտակար գործ կատարած մի արքեպիսկոպոսի ընտրության համար: Ահա այս երկյուղն էր, որ էջմիածնի միաբանությանը հարկադրեց թեկնածուների ցուցակում չմտցնել Հովսեփի անունը:

Նույն դիրքը զրավեցին Կ. Պոլսի պատրիարքարանում և հայկական շրջաններում ընդհանրապես, նկատի ունենալով, որ Հովսեփ արքեպիսկոպոսը ժամանակին մասնակցել է կոմս Զուբովի պարսկական արշավանքներին, հազիվ թե հաճելի լինի տեղական

17 ЭЗОВ, նշվ. աշխատությունը, էջ 392—393:

18 Պարսամյան Վ., Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, Երևան, 1940, էջ 28:

իշխանութիւններին¹⁹։ Թե՛ միաբանութիւնը և թե՛ Պոլսի պատ-
րիարքարանը սխալվեցին։ Հենց ինքը՝ Հովսեփն է գրում և առա-
ջարկում իր թեկնածութիւնը²⁰։ «Պատմութիւնից տեսնում ենք, որ
եզրեմէն մեծ մարդիքը՝ հասկանալով իրենց գինը և նկատելով, որ
ազգը սխալվում է՝ ուրանալով նրանց արժանապատուութիւնը,
սկսում են ազդին սխալ արարմունքն ուղղել»²¹, — գրում է Հովսեփ
Փոնդյանը։

Հովսեփի թեկնածութիւնը առաջագրելու պահանջով էջմիածին
են դալիս նաև վրաց թագավորի ներկայացուցիչները՝ արքայի նա-
մակով²²։

Այսուհանդերձ, Դանիելի ընտրութիւնը, ասես, հաջողվում էր։
Նա ճանապարհ է ընկնում ղեպի էջմիածին։ Սակայն էջմիածնական
գործերին ուսաց ակտիվ միջամտութեան պատճառով Դանիելը
աքսոր է ուղարկվում։ Այս բանում քիչ էէր Թուրքիայում ուսաց
ղեսպան Թամարայի դերը²³։

Դեռևս 1799 թ. Պավել կայսրի հրովարտակը՝ ուղղված Աստրա-
խանի, Մոզդոկի և Ղզլարի հայերին, վերահաստատում էր նշանա-
կում իր նախորդների՝ հայերի նկատմամբ արտոնագրերի, ինչպես
և հայոց ընդհանուր կաթողիկոսը հոգևոր պետ էր ճանաչվում նաև
ռուսահայերին²⁴։ Իսկ այժմ (1800 թ. 30-ը հոկտեմբերի) Պավելը
հրովարտակ է տալիս Հովսեփ Երկայնաբաղուկ-Արղուսյանին կա-
թողիկոս հաստատելու վերաբերյալ²⁵։ Մի այլ հրովարտակ էլ արքա-
յական գանձարանի գանձապահ Վասիլեին՝ թե Հովսեփի ստացած
ռոճիկը շարունակել վճարել, որպես ցմահ թոշակ²⁶։

էջմիածնում Արղուսյանի նման ռուսական կողմնորոշում ունե-
ցող կաթողիկոս լինելը ցարիզմի արեւելյան քաղաքականութեան
համար ուներ կենսական նշանակութիւն։ Դա էր պատճառը, որ
Ռուսաստանի միապետը, բացի վերոհիշյալ հրովարտակներից,

¹⁹ Архив Внешней политики России (после этого — АВПР), ф. Армян-
ские дела, д. 184, л. 48 об.

²⁰ Դիվան հայոց պատմութեան, գիրք Ե., Թիֆլիզ, 1902, էջ 32—36։

²¹ Փոնդեան Յովսեփ, Աղբիւր ազգային արդի պատմութեան, «Կոռնկ Հա-
յոց աշխարհին», 1863, Ա Վեցամսյակ, էջ 301։

²² Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 9, վ. 169։

²³ Դիվան հայոց պատմութեան, գիրք Ա—Բ, Թիֆլիս, 1893, էջ 66։

²⁴ Центральный гос. исторический архив СССР (ЦГИА), ф. 880, оп.
5, д. 375, л. I.

²⁵ Акты, собранные Кавказскою археографическою комиссиею (АКАК)
Тифлис, 1866, т. II, стр. 1150—1151.

²⁶ Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244, վավ. 220։

հրաման է հղում Աստրախանի նահանգապետին՝ հայոց կաթողիկոսին զորքով, պատշաճ կերպով Անդրկովկաս ճանապարհելու մասին²⁷, նույն հանձնարարությունն է անում վրաց Գեորգի թագավորին՝ հայ հոգևոր առաջնորդին Թիֆլիսից Արարատյան երկիր ճանապարհելու համար²⁸,

Հովսեփը մեծ շուքով է ընդունվում Թիֆլիսում և եկեղեցում փառավոր արարողության ժամանակ ջերմեռանդ ճառ է արտասանում՝ Վրաստանը Ռուսաստանին միացնելու վերաբերյալ՝ Պավել Առաջինի հրավարտակի կապակցությամբ։ Նա այս անում էր, ինչպես նշում է Լեոն, որպես վրաց ազնվականության ներկայացուցիչ²⁹,

Հովսեփին բախտ չէր՝ վիճակված բազմելու էջմիածնի դահլին։ Նա վախճանվում է Թիֆլիսում, 1801 թ. մարտին։

Դրությունը էջմիածնում ավելի է սրվում։ Նորից առաջին ընտրյալը Դանիելն էր, սակայն Դավիթ արքեպիսկոպոսը, Նրեանի խանի անմիջական նախաձեռնությամբ, նրա զորականների աջակցությամբ, եկավ էջմիածին և օծվեց։ Իսկ 1801 թվականի ապրիլի 28-ին հաջողվեց ստանալ Բարձրագույն Դռան հաստատման հրովարտակը (ֆիրման)³⁰,

Հետաքրքրական է, այս հարցին ուսական կողմը նայեց որպես Անդրկովկասում իր քաղաքականության համար ձեռնտու միակտի։ Եթե ոչ, ինչով բացատրել այն փաստը, որ Թամարա դեսպանը Դանիելի նկատմամբ բացասական դիրք բռնեց։ Այդ մասին 1801 թվականի սեպտեմբերի 6-ին Հովակիմ Լազարյանին է գրում ինքը՝ Դանիելը, թե Կ. Պոլսի ուսական դեսպանի ասօրինի միջամտությունների պատճառով բոլոր ականավոր հայերը ետ են քաշվել Մայր Աթոռի շահերը պաշտպանելուց, իսկ հակաթու Դավիթը շարունակում է շահատակել³¹։

Իրոք, ուսաներին ձեռնտու էր Դավթի ընտրությունը, այլապես Հովսեփի համար այնքան ջանք թափած կառավարությունը այսքան հեշտությամբ չէր զիջի Դավթի օգտին։ Մանավանդ հայերի նրկատմամբ ուսաց քաղաքականության մեջ փոփոխություն չէր նրկատվում, դեռ ավելին, նոր կայսրը (Ալեքսանդր Առաջինը) Կնորինգին ուղարկած ռեզկրիպտում մասնավորապես գրում էր. «Ձեռ

27 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 10, վավ. 61:

28 Նույն տեղում, վավ. 62:

29 Լեո, Հայոց պատմություն, մասն առաջին, ձեռագրի իրավունքով, Նրեան, 1926, էջ 158:

30 Դիվան հայոց պատմության, գիրք է, Թիֆլիս, 1909, էջ ԺԸ—ԺԹ:

31 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 11, վավ. 50:

առանձին աշարջությանն ենք հանձնում՝ գրավել հայոց ազգը ա-
մեն տեսակ հրապույրներով...»³²։

Մանոթանալով հանդամանքների իսկությանը (այդ երևում է
Մինաս և Հովակիմ Լազարյանների 1801 թ. նոյեմբերի 14-ի նամա-
կից)³³, կայսրը Դանիելին հաստատում է կաթողիկոս, իսկ արքե-
պիսկոպոս Եփրեմին՝ ուսա-հայոց առաջնորդ։ Հայոց կաթողիկո-
սության խնդրի նկատմամբ Ալեքսանդր Ա-ի վերաբերմունքը ավե-
լի ցայտուն է երևում դեսպան Թամարային հղած մի գրության
մեջ³⁴, ուր հայտնում է, թե Դավթի ընտրությունը Ռուսաստանին
ձեռնտու չի, նա ընտրվել է Երևանի խանի միջամտությամբ և հարկ
է համոզել թուրքական մինիստրությանը Դանիելի ընտրության կա-
պակցությամբ։

Ինչ էր մնում անել դեսպան Թամարային, եթե ոչ Բարձրագույն
Դռան զարմացական հայացքի տակ աշխատել Դանիելի օգտին,
հրովարտակ հանել նրա համար, կատարել իր միապետի կամքը³⁵։
Այդ մասին ցավով Դավթին է գրում Գրիգոր Աղայեկովը՝ նրա
կողմնակիցը և խորհուրդ է տալիս իր (Դավթի) ձեռքին գտնվող բո-
լոր ֆիրմաներն ու հանրագրերը ուղարկել ցարին՝ ապացուցելու իր
ընտրության օրինականությունը³⁶։

Այսպիսով, երկու հակաթու կաթողիկոսների գոյությունը (Դա-
նիելը օծվում է Բագրևանդ գավառի Ուլ-Ջիլիսա վանքում) առաջ է
բերում մի պայքար, որը հայ-պատմագրության մեջ հայտնի է «Դա-
վթ-դանիելյան պայքար» անունով։ Ըստ էության այս պայքարը
քաղաքական պայքար էր երկու խմբակցությունների միջև։ Մի կող-
մում ռուսական կողմնորոշում ունեցող խմբակցությունն էր, մյու-
սում՝ պարսկոֆիլը։ Համոզեցուցիչ է Լեոյի այն պնդումը, թե Դավ-
թի հաջողությունը տեսնելով, Դանիելի կուսակցությունը սկսեց ա-
վելի ռուսասեր ձևանալ³⁷։ Հակաթու կաթողիկոսներ հայ իրակա-
նության մեջ նախկիններում եղել են, բայց այժմ խնդիրը միան-
գամայն այլ բնույթ ուներ։ Հակաթու երկու կաթողիկոսների հա-
վում, ասես, կանգնած են երկու պետությունների՝ իրենց ակնկալու-
թյուններով և քաղաքական որոշակի ձգտումներով։ Այնպես որ դա-
նիելյան կուսակցության ռուսասիրությունը չէ, որ ռուսական կա-

³² АКАК, т. I, стр. 436.

³³ Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 11, վավ. 174։

³⁴ АВПР, ф. Армянские дела, д. 185, л. 19.

³⁵ Նույն տեղում, թ. 131։

³⁶ Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 11, վավ. 165։

³⁷ Լեո, Հայոց պատմություն, մասն առաջին, ձեռագրի իրավունքով, Երևան,
1926, էջ 196։

առավարական շրջաններում հետաքրքրություն էր առաջացրել էջմիածնի նկատմամբ, այլ Պետերբուրգում մշակվել էր պարզորոշ մի ծրագիր Անդրկովկասի վերաբերյալ և այդ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ էին քաղաքական հենարաններ: Եթե ոչ՝ ինչու ուսական կողմը այնքան ջանք էր թափել Հովսեփի և այժմ էլ թափում է Դանիելի համար: Իսկ ինչ վերաբերում է դանիելյան կուսակցության դեպի ուսաներն ունեցած հակվածությանը, ապա այն չէր առաջացել Դանիելին կաթողիկոս դարձնելու մղումից, այլ դա քաղաքական կողմնորոշում էր, որը ձևավորվել էր արևելահայության մոտ 18-րդ դարի 20-ական թվականներից³⁸ և այժմ նոր բնույթ է ստանում ու ավելի խորանում Ռուսաստանի սահմանները Հայաստանի մոտենալու հետ միասին: Եվ ուսաների համար էլ հազիվ թե ցանկալի կամ տանելի լիներ էջմիածնի դահակալին տեսնել Երևանի խանի դրածու: Կաթողիկոսական խնդրի վերաբերյալ սկսվում են անհամար գրագրություններ և այլ միջամտություններ:

Հետաքրքիր է, որ հարցին միջամտում է նաև Ռուսաստանի միապետը, Երևանի խանին գրելով, թե Դանիելը ունի սուլթանի ֆիրման և հաստատման իր հրովարտակր: Միաժամանակ հույս է հայտնում՝ խանի օժանդակությամբ Դանիելին էջմիածնի աթոռին բազմեցնելու վերաբերյալ³⁹, Երևանի խանը եթե այսպես հեշտությամբ տեղի տար, էլ ինչու էր զինվորների ուղեկցությամբ Դավթին էջմիածին ուղարկում: Սկզբնական շրջանում նա Դանիելին թույլ չէր տալիս անգամ պարսկական գերիշխանության սահմանները մտնելու, որի պատճառով վերջինս, ինչպես նշվել է վերևում, օծվեց այլ վայրում: Սակայն ուսաց կառավարության համար խընդիրը ոչ թե Դանիելի օծումն էր, այլ էջմիածնի գահին նրա բազմելը: Այդ էին թելադրում Ռուսաստանի քաղաքական շահերը: Այս պարագան պարզ երևում է Վրաստան ժամանած իշխան Յիցիանովին կայսրի հղած ռեսկրիպտից (1802 թ. սեպտեմբերի 26)⁴⁰, ինչպես նաև կոմս Ալեքսանդր Վորոնցովի Մամեդ խանին ուղարկած գրությունից, ուր խնդրվում էր Դանիելին պատվով էջմիածին բերել և կողմնակալ չլինել Դավթի նկատմամբ, այլ կերպ դա կշարժի երկու կայսրերի դժգոհությունը⁴¹ (խոսքը նաև Թուրքական սուլթանի մասին է— Կ. Հ.):

³⁸ Армяно-русские отношения в первой трети XVIII в., под редакцией А. Иоаннисяна, т. II, ч. I, Ереван, 1964, стр. XXI.

³⁹ Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 13, վավ. 309:

⁴⁰ АКАК, т. II, стр. 8—9.

⁴¹ Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 12, վավ. 244:

Երևանի խանը, այնուհանդերձ, անհողորդ էր և նրա դիմադրության պատճառով էր, որ Դանիելը ոչ միայն չկարողացավ էջմիածնի գահին բազմել⁴², այլև Երևանի խանության սահմանները մտնել մինչև 1802 թ. վերջերը: Այս ընթացքում Դավիթը միաբանության անունից մի ուղերձ է հղում ռուսաց կայսրին՝ ապացուցելով իր կաթողիկոսության օրինականությունը⁴³: Որ այդ գրության տակ միաբանության շատ անդամներ ստորագրել են վախի ազդեցությամբ կամ ստիպողաբար, երևում է մի այլ վավերագրից՝ Ուշ-Քիլիսայի Սահակաշեն եկեղեցու սպասավոր Հովհաննես քահանայի՝ Եփրեմ արքեպիսկոպոսին դրած նամակից⁴⁴, ուր հայտնվում է այն մասին, թե էջմիածնից 20 հոգեւորական փախել եկել են Դանիել կոթողիկոսի մոտ, և վերջինս նրանց ընդունել է գործավազութ հոր նման:

Ռուսական արքունիքը դիմում է նոր միջոցի. ցարը կարգադրություն է անում, ըստ որի ոչ մի հայ հոգեւորականի թույլ չի տրվում ռուսական սահմանն անցնել, եթե նա չունի Դանիել կաթողիկոսի վկայականը⁴⁵: Սրան ի պատասխան, խանը դիմում է այլ միջոցի. նա Քայազետի փաշայից պահանջում է Դանիելին և ապա հանձնում Դավթի ձեռքը⁴⁶, միաժամանակ պնդում՝ թե Դանիելը կայսերական քառասուն հրովարտակ էլ ունենա, նրան չի ձանաչելու կաթողիկոս⁴⁷:

Իշխան Յիցիանովը, գործադրելով դիվանագիտական ամեն մի միջոց, ձգտում է այդ հարցում հասնել քաղաքական հաղթանակի: Նա երկու անգամ դեսպանություն է ուղարկում խանի մոտ: Երկրորդ դեսպանության ժամանակ պահանջը սպառնալից էր՝ էջմիածնի գահը հանձնել Դանիելին, եթե ոչ՝ «քար ու քանդ կլինի Երևանի բերդը»⁴⁸: Խանը, պարզ է, գիտի Դանիելին կաթողիկոսական գահին բազմեցնելու խնդրում ռուսների ձգտման քաղաքական նշանակությունը: Նա էլ իր հերթին է դիվանագիտական քայլ կատարում, պնդելով, թե Դանիելը կաթողիկոսական գահին կնստի, եթե ռուսները Ախալցխայի Շերիֆ փաշային թույլ տան վերադառնալ իր պաշտոնին⁴⁹:

42 *См'у Дубровин, Закавказье (1803—1806 гг.), СПб, 1866.*

43 Դիվան հայոց պատմության, գիրք 2, Թիֆլիս, 1904, էջ 413—417:

44 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 12, վավ. 207:

45 Նույն տեղում, վավ. 124:

46 АКАК, т. II, стр. 273.

47 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 12, վավ. 210:

48 Նույն տեղում, թղթ. 14, վավ. 11:

49 Նույն տեղում, վավ. 19:

Պահանջը անընդունելի էր. ուսաները իրենց թշնամուն ոչ մի գիշում չէին կատարի:

Քաղաքական այս իրավիճակից հլնելով, իշխան Յիցիանովը որոշում է արշավանք ձեռնարկել Երևանի վրա: Նա ծրագրում է վեց զինված վաշտով մտնել բերդը, կոտրել խանի համառությունը, Դանիելին բերել տալ էջմիածին, իսկ Երևանում պահել կայազոր, որին, իրենց խոստման համաձայն, կհրակրելու էին հայ վաճառականները: Այս մասին նա գրում է ցարին⁵⁰:

Ինչպես երևում է, Դանիելը առիթ էր ծառայելու ուսաների երկվանյան արշավանքի համար: Չնայած իրադարձությունների այսպիսի որոշակիությունը, Յիցիանովը դարձյալ շարունակում է Երևանի խանի հետ դիվանագիտական կապը: 1803 թվականի հունիսի 4-ին նորից գրում է Երևան, նորից պահանջում Դավթին իրեն հանձնել, Դանիելին բազմահյնել կաթողիկոսական գահին, այլ կերպ՝ «Այս կլինի պատճառ իմ և քո (այսինքն՝ խանի—Կ. Հ.) հարաբերությունների խզման, այս կլինի պատճառ Երևանի նահանգի խանության փրկության կամ կործանման. հաշտության այլ ճանապարհ ես չգիտեմ»⁵¹:

1804 թվականի գարնանը, Դանիելի զրավումից հետո, ուսպարսկական հարաբերություններն ավելի են սրվում: Անդրկովկասում ուսաների ամրացող դիրքը հրկյուղ էր ներշնչում պարսկական կողմին: Արդեն կային զինված ընդհարման նախադրյալներ: Այս պայմաններում էլ Դավիթ-դանիելյան խնդիրը ուսաների համար դիվանագիտական հարց էր, դիվանագիտություն, որի հեռահար նպատակներն ավելի լուրջ էին ու ծանրակշիռ: Այսպես, օրինակ, 1804 թվականի մայիսի 10-ին Երևանի խանին Յիցիանովի գրած նամակում⁵², ճիշտ է, Դավթի կամ Դանիելի մասին առաջարկություններ կային, բայց հիմնական բովանդակությունը հետևյալն էր՝ հանձնել Երևանի բերդը, հպատակություն ուսաց ցարին, տարեկան 8000 ռ. հարկ: Այս պահանջին ինչպե՞ս կհամաձայնեի խանը, երբ Թիֆլիս էր մեկնում (եթե չէր մեկնել արդեն) պարսկական ներկայացուցիչը՝ նամակով⁵³, ուր պահանջում էր ուսաներից թողնել վրաստանը: Ինչպես երևում է, պարսկական կողմը ագրեսիվ դիտավորություն ուներ:

⁵⁰ АКАК, т. II, стр. 610.

⁵¹ Նույն տեղում, էջ 611:

⁵² Նույն տեղում, էջ 613:

⁵³ Иоаннисян А. Р., Присоединение Закавказья к России и международная дипломатия в начале XIX столетия, Ереван, 1958, стр. 74.

Յիցիանովը զգալով պարսիկների ագրեսիվ նպատակները⁵⁴, 1804 թվականի հունիսի 4-ին 4000-անոց զորքով անցնում է խանության սահմանները, ուր գտնվում էր պարսկական թագաժառանգի 20-հազարանոց բանակը և սպասվում էր Ֆաթ-Ալի շահի 15-հազարանոց զորաբանակը: Այլ կերպ, այն հազիվ տեղի ունենար Դանիելի կաթողիկոս դառնալու վերաբերյալ խանից մերժում ստանալու պատճառով: Դուբրովինը երևանյան արշավանքի պատճառը համարում է խանի մերժումը⁵⁵:

Ռուսական զորքը էջմիածին մտավ Ներսես Աշտարակեցու առաջնորդությամբ, և միաբանության (Դավիթը գտնվում էր Երևանում) մեծամասնությունը ցնծությամբ դիմավորեց ռուսական բանակին: Էջմիածնի վանքը Յիցիանովի զորքին նյութական օժանդակություն է ցույց տալիս⁵⁶, իսկ հոգևորականությունը՝ ամեն տեսակ օգնություն Երևանի պաշարման ընթացքում⁵⁷:

Երևանյան արշավանքի ժամանակ ռուսական բանակին ամենօրյա օգնություն են ցույց տվել հայ աշխատավորական զանգվածները:

Նվ միջին այս չէր պատճառը, որ Ֆաթ-Ալի-շահի մոտ միտք է հղանում՝ կրկնել Շահ-Աբասի օրինակը: Այժմ արդեն շահի համար այդ մղումն ուներ քաղաքական նպատակ, որն աներկբայորեն առաջացել էր արևելահայության դեպի Ռուսաստանն ունեցած հակվածությունից: Եթե չիրականացավ այս մտադրությունը, պատճառը դիվանագետ և հեռախոս թագաժառանգն էր: Վերջինս այդ դիտավորության մեջ որևէ օգտակար բան չէր տեսնում⁵⁸:

Երևանի անհաջող պաշարումից հետո ռուսական զորքերը թողեցին խանության սահմանները: Թիֆլիս տեղափոխվեցին (պարսիկների ձեռքը չընկնելու և ապագայում վերադարձվելու դիտավորությամբ) Մայր աթոռի նյութական արժեքները:

Ռուսների նահանջից հետո Աթոռ է գալիս Աբաս-Միրզան, հարցումներ անում վանքում եղած վարդապետներին և ճետ առնելույ զպատասխանի ի վարդապետացն որպես եղեալն է, տեսեալ էր զդուռն սուրբ Լուսավորչի խորանին ի փակ, և հարցեալ էր վասն նորա թէ զիա՞րդ այսպէս փակ պահէք զայս դուռն, և վարդապետք

⁵⁴ Հովհաննիսյան Ա., նշված աշխատությունը, էջ 74—75:

⁵⁵ Дубровин Н., Закавказье 1803—1806 гг., СПб, 1866, стр. 121.

⁵⁶ ЦГВИА, ф. ВУА, д. 4259, ч. I, л. 12.

⁵⁷ АКАК, т. IV, стр. 171.

⁵⁸ Ան, Հայոց պատմություն, մասն առաջին, ձեռագրի իրավունքով, Երևան, 1926, էջ 206:

ևս հասկացեալ էին թէ մեր բոլոր սրբութիւնքն յայս խորանին մէջն լինին, և ի սա ոչ ոք կարէ մտնել, բայց միայն Հայրապետն, ապա և նա ասացեալ էր թէ որովհետեւ այդպիս է և ես ոչ իշխեմ բանալ տալ և մտանել»⁵⁹։ Ռուսներին հակադրվելու միտում, քաղաքական նպատակ, էջմիածնի միաբանութեան մեջ դեպի ռուսները հակա-կրանք առաջացնելու ձգտում՝ ի՞նչ չկար թագաժառանգի այս արար-քի մեջ։

Նույն կերպ վարվեց նաև շահը. պատրաստութիւններով Աթոռ եկավ յուրայինների հետ, ներկա եղավ պատարագին և Լուսավորչի խորանին նվիրեց մի կանթեղ⁶⁰։

Այս շրջանում ֆրանսիական դիվանագիտութիւնը ձգտում էր իր ոլորտի մեջ ներքաշել էջմիածինը։ Այլ կերպ՝ ինչո՞վ բացատրել Ֆրանսիայի միապետի նամակը գրված Դավիթ կաթողիկոսին, որը, բարեբախտաբար, տեղ չի հասել⁶¹։

Կայսրի նման ցանկութիւնը երևում է 1808 թ. և հետագա իրադարձութիւնների ժամանակ։

Խնդիրն այն էր, որ Դավիթ կաթողիկոսը ոչ միայն պարսկա-կան օրինետացիա ուներ, այլև ցանկանում է վարել պրոֆրանսիա-կան քաղաքականութիւն, որը, այդ ժամանակահատվածի համար և ընդհանրապես, խիստ վտանգավոր էր հայ ժողովրդի ընդհանուր շահերի տեսակետից ու ամբողջութեամբ ուղղված էր Արևելյան Հա-յաստանը պարսկական լծից ազատագրելու, Ռուսաստանին միա-նալու առաջադիմական պրոցեսի դեմ։ Այնպես որ Դավիթ կաթողի-կոսի դիրքորոշումը վնասում էր հայերին։ Նրա վնասակար քաղա-քական այս դիրքորոշումն ի նկատի ուներ գեներալ Նեսվիտաևը, երբ առաջարկում էր՝ թողնել պարսկոֆիլ քաղաքականութիւնը, օգ-նել ռուսներին, հայտնել Մամադ խանին, որ Երևանը անգոր է ռու-սաց զորքին դիմադրելու⁶²։

Այս պարագաներում արևելահայութեան քաղաքական կողմնո-րոշման համար էջմիածնի ունեցած նշանակութիւնն էր պատճա-ռը, որ ռուսները այնքան ուժ ու եռանդ գործադրեցին Դանիէլի օգտին։ Նրանք, ի վերջո, հասան իրենց նպատակին (Դանիէլին գա-հին բազմեցնելու հարցում), տանելով քաղաքական լիակատար հաղթանակ Պարսկաստանի դեմ (նաև Ֆրանսիայի)։

Ալեքսանդր Առաջինը Դանիէլին պարգևատրեց ս. Աննայի առա-

59 Դիվան հայոց պատմութեան, գիրք է, Թիֆլիս, 1909, էջ 435—436։

60 Նույն տեղում, էջ ԼԴ։

61 Հովհաննիսյան Ա. Ռ., նշվ. աշխատութիւնը, էջ 107։

62 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 16, վավ. 115։

ջին աստիճանի շքանշանով⁶³, որը, սակայն կաթողիկոսը, հավանաբար ներսես Աշտարակեցու խորհրդով, չկրեց մինչև թագաժառանգից թույլտվություն ստանալը⁶⁴:

Դանիելի գահին բազմելով էջմիածինը ուսաների համար դառնում է ինֆորմացիայի մի կենտրոն, որտեղից նրանք ստանում էին բազմապիսի տեղեկություններ Երևանի խանության սահմաններում և նրան հարող շրջաններում կատարվող անցուղարձի մասին:

Նշենք, որ 1808 թ. ամռանը էջմիածին է գալիս Պարսկաստանում ֆրանսիական դեսպանության ռազմական կցորդ Ժան-Բապտիստ դե Բուասոն: Մեկնելիս նրան է հանձնվում Դանիելի ուղերձնամակը Նապոլեոնին⁶⁵, կայսրության խորհրդական և մինիստր Փորտալիսին⁶⁶, ինչպես և շնորհակալական մի գրություն հենց իրեն՝ Բուասոնին⁶⁷: Ֆրանսիայի միապետին գրած ուղերձնամակում Դանիելը խնդրում է կայսեր ուշադրությունը՝ նրա գերիշխանության տակ գտնվող հայերի նկատմամբ: Նույն բովանդակությամբ գրություն է գրվել նաև Ֆրանց III-ին⁶⁸:

Ֆրանսիայի կայսրին նամակ գրելու կամ ֆրանսիական դեսպանության ներկայացուցչին լավ ընդունելու հարցի մեջ կարելի՞ է արդյոք էջմիածնի կողմից Ֆրանսիայի նկատմամբ քաղաքական ակրնկալության փորձ փնտրել կամ այդ փաստերը համարել այս հաստատության քաղաքական կողմնորոշման երկփեղկում: Ո՞չ: Կայսրին գրած նամակ-ուղերձը կամ Բուասոնի նկատմամբ լավ վերաբերմունքը ունեւ լուկ քաղաքավարական նշանակություն:

Վրաստանի կառավարչապետ Գուգուլիշը դեռևս 1808 թվականի հունվարին կայսրին գրում էր. «Պարսկաստանում ֆրանսիական միսիան (Գարգանի դեսպանության մասին է խոսքը—Կ. Հ.), շնայած մեզ հետ բարեկամական դաշինքին (ակնարկվում է Տիլզիտի հաշտության պայմանագիրը—Կ. Հ.), այժմ ավելի է վնասում պարսիկների հետ մեր գործերին»⁶⁹: Այսպիսին էր Տիլզիտի հաշտությամբ առաջացած ֆրանս-ուսական «բարեկամությունը»: Սակայն հետագայում (1809 թ., ապրիլ), երբ հայտնի է դառնում, որ գեներալ

⁶³ АВРП, ф. Армянские дела, д. 186, л. 218.

⁶⁴ Երեցեանց Ա., Ներսես եպիսկոպոսը Դանիելի ժամանակ, «Փորձ», 1877—78, № 2, էջ 153:

⁶⁵ Դիվան հայոց պատմության, գիրք Ե, Թիֆլիս, 1902, էջ 552—553:

⁶⁶ Նույն տեղում, էջ 554—556:

⁶⁷ Նույն տեղում, էջ 554:

⁶⁸ Նույն տեղում, էջ 553—559:

⁶⁹ ЦГВИА, ф. ВУА, д. 4265, л. 17.

Գարդանը հայրենիք⁷⁰ է վերադառնալու Ռուսաստանով⁷⁰ (անգլիական քաղաքականությունը Պարսկաստանում հաղթանակել է ֆրանսիականին), վրաստանի նոր կառավարչապետ Տորմասովին հանձնարարվում է Գարդանի և նրա խմբի բարեհաջող վերադարձին վերաբերվել ամենայն հոգատարությամբ⁷¹։ Այս փաստից կարելի է դատել, թե Ռուսաստանը ունեւ ֆրանսիական կողմնորոշում։ Իհարկե ոչ։ Իսկ դրանից առաջ, դեռեւրաւ Գարդանից ստացած տեղեկությունների համաձայն, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Շամպայնին միապետին հղած ղեկույցում էջմիածնի մասին գայրույթով գրում է, որ ռուսներին հաջողվել է նստեցնել այնտեղ իրենց դրածոյին⁷²։ Այս փաստերի առկայության պայմաններում էջմիածնի՝ ֆրանսիական կողմնորոշման մասին խոսելը իմաստ չունի։ Իսկ որ Ֆրանսիան ցանկացել է իր դիվանագիտական ուղբաի մեջ ներքաշել հայոց հոգևոր կենտրոնը, դա փաստ է։ Նապոլեոնը այդ շրջանում (1805—1808 թթ.) և դրանից հետո էլ⁷³ ձգտել է էջմիածնի հետ քաղաքական հարաբերություններ հաստատել ևլնելով իր ագրեսիվ նպատակներից։ Հիշատակություն կա այն մասին, որ նա ցանկացել է Փարիզում նույնիսկ բացել հայկական համալսարան, ուր ֆրանսիացի երիտասարդները ռազմական որոշ առարկաներ պետք է ուսումնասիրեն հայերեն լեզվով⁷⁴։ Պարզվում է, որ Ֆրանսիայի կայսրը իր արեւելյան քաղաքականության մեջ, հավանաբար, որոշակի տեղ էր տալիս հայերին, Հայաստանին։

Հայոց կաթողիկոսի հարցը ռուսաց դիվանագիտության օրակագրից չէր հանվել, ղեռնա մնում էր կարևոր խնդիր, քանի որ դառամյալ ութուկազմ կաթողիկոսը՝ Դանիելը, ապրում էր իր վերջին օրերը։

Նոր կաթողիկոսի վերաբերյալ առաջինը՝ մտածել տվեց ինքը՝ Դանիել կաթողիկոսը ռուսաց ցարին հղած խնդրանքով⁷⁵, որտեղ նա առաջարկում է իր փոխարեն կաթողիկոս ընտրել Նփրեմ արքեպիսկոպոսին։ Դեպքերը արագ են հաջորդում միմյանց. մինչ ցարական արքունիքը քննության կառնեւ Դանիելի՝ ղիմումը, Նփրեմ

⁷⁰ АКАК, т. IV, стр. 681.

⁷¹ Նույն տեղում, էջ 684։

⁷² Հովհաննիսյան Ա. Ռ., նշվ. աշխ. էջ 171։

⁷³ Մատենադարան, ձեռագիր, № 2922, թթ. 19—20, տե՛ս նաև Հովհաննիսյան Ա. Ռ., նշվ. աշխ., էջ 229։

⁷⁴ Մատենադարան, կաղարյանների արխիվ, թղթ, 103, դ. 5, վ. 194։

⁷⁵ Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 20, վավ. 213։

արքեպիսկոպոսը ստանում է էջմիածնի սուրբ ժողովի գրությունը⁷⁶ (1808 թ. հոկտ. 25), որով հայտնվում է Դանիելի մահը և առաջարկվում է Եփրեմին էջմիածին շտապել՝ օծվելու: Դժվար չէ ենթադրել, որ այս պարագայում էլ ցարիզմը առավել նշանակություն կտար իր համար ձեռնադրել կաթողիկոս ընտրելու հարցին: Չէ՞ որ ռուսական կողմնորոշում ունեցող էջմիածնում ջերմորեն ընդունեցին Գուգովիչի բանակի մուտքը⁷⁷ կամ նրա ռուս վիրավոր զինվորների նկատմամբ խնամք տանելու համար խնդրանքին (1808 թ. նոյեմբ. 21)⁷⁸. ահա թե ինչ է պատասխանել Ներսես Աշտարակեցին. «Գրելով ոչ կամիմ յայտել ձերոյ պայծառափայլութեան վասն ծառայելոյն մերոյ, ալ կամիմ յայտնել թէ ջերմեռանդ է սուրբ Աթոռն էջմիածին յամենայն ժամանակի առ Ամենողորմած Աթոռ Կայսերութեան ամենայն ռուսաց և առ զօրապետս և՛ զորս նորին և ոչինչ կերպիւ՝ ոչինչ ժամանակի՝ չէ խնայել և չէ խնայելուց երբեք ի հաւատարմութեանց Կ. Մ. զիւր կարելի ծառայութիւնն»⁷⁹: Քիչ ուշագրավ չէ. ռուսական բանակի մայոր Չերքեզովի՝ էջմիածնի հոգևորականությանը տված վկայագիրը նրանց կողմից ռուս հիվանդ և վիրավոր զինվորներին մարդասիրական վերաբերմունք ցույց տալու վերաբերյալ⁸⁰: Եթե ի նկատի ունենալ նաև ռուսական անդրկովկասյան բանակի հրամանատարության էջմիածնին տված նշանակությունը՝ Պարսկաստանից և Թուրքիայից ռազմական կարեւոր լուրեր ստանալու և ռուսներին հայտնելու կապակցությամբ⁸¹, պարզ կլինի, թե ռուսական կողմը այժմ էլ ինչպես կվերաբերվի հայոց կաթողիկոսի խնդրին: Այդ առումով ուշագրավ է կոմս Սալտիկովի Վրաստանի կառավարչապետ Գուվիչին ուղարկած գրություն-հանձնարարականը (1809 թ. հունվարի 29⁸²): Չիմանալով Դանիելի մահվան մասին, նա հայտնում է, որ Դանիել կաթողիկոսը, հիվանդությունը պատճառաբանելով, գիմել է իրեն փոխանորդ ընտրել Եփրեմին, նույնը կրկնել է Լազարեը, ապա ավելացնում է, որ «Եթե Դանիել կաթողիկոսը արդեն մահացել է, նրան փոխարինել Ռուսաստանին նվիրված անձ, նախորդությամբ, որպեսզի պարսիկները չօգտվեն այդ հանգամանքից և իրենց ձեռնադրել կաթողիկոս նշանակեն, որին անխուսափելիորեն կհետևի կուսակցությունների բաժանումը, ինչպես նախկինում էր:

76 Նույն տեղում, թղթ. 19, վավ. 124:

77 Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 110, գ. 15, վավ. 53:

78 Նույն տեղում, կաթ. գիվան, թղթ. 19, վավ. 131:

79 Նույն տեղում, թղթ. 20, վավ. 227:

80 Նույն տեղում, թղթ. 19, վավ. 136:

81 Նույն տեղում, թղթ. 19, վավ. 26:

82 АКАК, т. III, стр. 81—82.

ել մեղ համար այնքան վտանգավոր հետեանքներով անվերջ խառնաշփոթությունները կանխելու նպատակով Նորին Բարձրությունը, ղեկավարվելով հայրենիքի օգուտներով, թույլատրում է ձեզ Դանիելի մահվան դեպքում շնչասել այստեղի նախնական հաստատմանը, Նորին կայսերական մեծության անունից կաթողիկոսական պաշտոնին հաստատել եպիսկոպոսներից նրան, ում դուք ձեր ընտրությամբ կհամարեք առավել արժանավոր, նկատի ունենալով նաև այն, որպեսզի նա լինի Ռուսաստանին նվիրված և հայ ժողովրդին հաճելի⁸³», վերջում էլ՝ թե նորին գերազանցությունը դեմ չէ Դավթին Նորից կաթողիկոս ընտրելուն, եթե կարելի լինի նրան մեր կողմը գրավել⁸⁴:

1809 թ. փետրվարի 8-ի գրությամբ⁸⁵ Գուգովիչը Սալտիկովին հայտնում է, որ էջմիածնի միաբանությունը ընտրել է Եփրեմին և խնդրել իրեն՝ միջնորդելու նրա համար Եփրեմը, ավելացնում է Գուգովիչը, երկար ժամանակ ապրելով Ռուսաստանում, օգտվել է կայսեր շնորհներից և նվիրված է մեզ, միայն նա առաջիմ Թիֆլիսում պետք է մնա, նկատի ունենալով էջմիածնի պարսկական գերիշխանության տակ գտնվելու փաստը: Չէ՞ որ նա ռուսների կողմից ընտրված կաթողիկոս է:

1809 թ. ապրիլին Ալեքսանդր Առաջինը ստորագրում է հայոց Նոր կաթողիկոսի հաստատման վերաբերյալ հրովարտակը⁸⁶:

Այսպիսով, Եփրեմի ընտրությունը տեղի ունեցավ առանց պարսից շահի հրովարտակի և սուլթանի ֆիրմանի: Ռուսական քաղաքականության հաղթանակը էջմիածնի հարցում ավելի էր հաստատուն դառնում:

Իդուր էր Գուգովիչի անհանգստությունը Եփրեմի անմիջապես էջմիածին զալու վերաբերյալ: Պարսկական կողմն արդեն տեսել էր էջմիածնի խնդրում ռուսների ակտիվ միջամտության պտուղը ու հաղիվ թե որոշեր դիմադարձ կանգնելու այդ հարցում: Ընդհակառակն, պարսիկներն էլ իրենց հերթին էին դիվանագիտական քայլեր կատարում: Օրինակ, դեռևս Դանիելի մեծիմահ հիվանդ օրերին Երևանի սարդարը գրում է Եփրեմին (իմանալով սակայն, որ նա ռուսների թեկնածուն է), թե էջմիածնի Աթոռը մնալու է թափուր, և շահն ու թագաժառանգը տվել են իրենց համաձայնությունը Եփրեմի օգտին⁸⁷: Պակաս ուշագրավ չէ Աբաս-Միրզայի հրամանը՝ տրված Նոր-

83 Նույն տեղում:

84 Նույն տեղում:

85 Նույն տեղում, էջ 83:

86 АВПР, ф. Армянские дела, д. 190, л. 1.

87 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 19. վավ. 187:

ընտիր կաթողիկոսին⁸⁸։ Իսկ Երեւանի սարգարը գրում է. «... ամբողջ մտօք և կատարեալ միամտութեամբ ժամանիսցիք առ Աթոռն և լուսաւորեսցիք ձերում. տերութեան կարօտեալ զաղս միաբանից և սլաշտօնէից Աթոռոյն, և զմեզ կարօտքս առ Աստուած ձեր ամենայն գործոց ամենայն կերպիւ և ամենայն դրամբք ձեռնտու և յառաջացուացանօղ իմասցիք, և զձեր ամենայն գործն անթերի և անպակաս գիտելով եկեսցիք օր յառաջ զի վերաբազմեսցիք ի կաթողիկոսարանն յիշեալ Աթոռոյն»⁸⁹։

Թիֆլիսից Եփրեմի Աթոռ շտապելու հորդորանք կա նաև Աբաս-Միրզայի մի այլ գրութեան մեջ⁹⁰։

Պարսկական կողմը աշսպխի դիվանագիտական քայլեր կատարելով, անշուշտ, ուներ և քաղաքական ակնկալութիւններ։ Այլ կերպ ինչպե՞ս հասկանալ Եփրեմի վերաբերյալ շահագրեի հրովարտակի իմաստը, թե «... պարտէք ուրեմն զմեր ողորմութեան ծովն հետզհետէ ի վերա ձեր շարժուն իմանալ և կատարեալ յուսով և ակնկալութեամբ դիմել առ երանաւոր զորութիւն մեր։ Այսպես գիտասցիք և ըստ հրամանի մերում կատարող լինուք»⁹¹։

Աբաս-Միրզան, ինչպես երևում է Եփրեմի վրացահայերին հղած անդրանիկ կոնդակից, իրկու մարդ էր ուղարկել որպէս հրավիրակ Թիֆլիսից նրան էջմիածին բերելու, իսկ ապա իր զորակայանում հանդիսավոր ընդունում է նրան, թանկարժեք նվերներ տալիս, պետական գարձարանից տարեկան 400 թուման թոշակ նշանակում⁹²։ Սակայն, երբ իմանում է, որ Եփրեմը Ալեքսանդր Ա-ի կողմից պարգևատրվել է ս. Աննայի առաջին աստիճանի շքանշանով, առաջարկում է չկրել այն, մինչև որ պարսկական կողմից էլ ստանա որևէ շքանշան⁹³։ Եփրեմը պարգևատրվում է «Առյուծի և Արեգակի» շքանշանով, որն այդ առթիվ սահմանեց և գործադրել սկսեց պարսից կառավարութիւնը⁹⁴։

Իրոք, Աբաս-Միրզայի՝ Եփրեմին լավ ընդունելութիւն ցույց տալը, նրան տարեկան 400 թուման թոշակ նշանակելը կամ շքանշանի արժանացնելը հետապնդում էին որոշակի նպատակ, որի արտահայտութիւններից մեկը հայոց կաթողիկոսից և էջմիածնի

⁸⁸ Նույն տեղում, թղթ. 21, վավ. 148։

⁸⁹ Նույն տեղում, թղթ. 19, վավ. 154։

⁹⁰ АКАК. т. IV, стр. 176.

⁹¹ Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 19, վավ. 151։

⁹² Նույն տեղում, Ա. երիցյանի արխիվ, թղթ. 158, վավ. 90։

⁹³ АКАК. т. IV, стр. 177.

⁹⁴ Գեղամեանց Ե., Պատմական քաղվածքներ, պրակ Ա—Ժ, Բաքու, 1909, էջ 109։

հոգևորականությունից պարսից գահի նկատմամբ հավատարմություն երգում վերցնելն էր⁹⁵։

Էջմիածնի բարձրաստիճան հոգևորականությունը, իրոք, երգվում է, այն հաստատվում է մի ձեռագիր ավետարանի վրա, որն Աբաս-Միրզան վերցնում է իր մոտ⁹⁶։ Այսուհանդերձ, թե՛ Եփրեմը և թե՛ Էջմիածնի միաբանությունը մենացին ուսական կողմնորոշման շատագուլներ և իրենց ապագա գործունեության ընթացքում էլ անվարան շարունակեցին իրենց բաղաքական այս ընթացքը։ Բազմաթիվ փաստերից կարելի է հիշատակել միայն երկուսը։

Նապոլեոնյան բանակի ուսական երկիր մտնելու կապակցությամբ Եփրեմ կաթողիկոսը հրամայում է Ռուսաստանի և Անդրկովկասի բոլոր հայկական եկեղեցիներում աղոթել ուսաց զորքի հաղթանակի համար⁹⁷։ Կամ նույն Եփրեմը մեծ սրտացավությամբ է արտահայտվում Ֆրանսիական հրոսակների կողմից Մոսկվայի հրդեհման առթիվ, գրելով, թե՛ «Իրավ ոչ կարեմ բովանդակել ըստ գրով զառաւելութիւն մեծի տրամութեանս և ցաւոյս, զոր զգացի և զգամ տակաւին յանձին իմում յաղագս աւերութեան հրաշակերտ մայրաքաղաքին Մօսկովու և զանազան նեղութեանց բնակչացն նոսա և ի շրջակայս նորին»⁹⁸։ Հարկավ, այսպես կվարվեր ուսական կողմնորոշում ունեցող հայոց եկեղեցու հոգևոր պետը։

1814 թ. վրացահայերի հոգևոր առաջնորդ է ընտրվում Ներսես Աշտարակեցին։ Աշտարակեցու Թիֆլիս մեկնելուց հետո Էջմիածնի կաթողիկոսի ու ուսական կովկասյան վարչության միջև հարաբերությունները տեղի էին ունենում նրա միջոցով։ Ներսեսի՝ վրացահայերի առաջնորդության շրջանում Թիֆլիսի հայ գաղութը դառնում է կենտրոն նաև Պարսկաստանի և Թուրքիայի հայության համար⁹⁹։

Աշտարակեցին թեև հեռացել էր Էջմիածնից, սակայն տեղյակ էր, Մայր աթոռի անցուղարձին և նախանձախնդիր հայ հոգևոր կենտրոնի ճակատագրի համար։ Նա երազում էր արևելահայություն (և ոչ միայն արևելահայություն) ու Էջմիածնի ազատագրումը օտար

⁹⁵ АКАК, т. IV, стр. 176.

⁹⁶ Ներցեանց Ա., Ներսես Աշտարակեցին եպիսկոպոս ժամանակ (1809—1814 թթ.), «Փորձ», 1881, № 3, էջ 57։

⁹⁷ Нерсисян М., Отечественная война 1812 г. и народы Закавказья, Ереван, 1965, стр. 196.

⁹⁸ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 103, գ. 5, վավ. 99։

⁹⁹ Լեո, Հայոց պատմություն, մասն երկրորդ, ձեռագրի իրավունքով, Երևան, 1927, էջ 38։

լծից, քանի որ Գյուլիստանի հաշտության պայմանագրով (1813 թ.) Արարատյան երկիրը, Նախիջևանը մնացին պարսկական գերիշխանության տակ: 1814 թ. օգոստոսի 19-ին Ներսեսը գրում է ռուսահայոց առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսին, խնդրում նրան՝ ջանք չխնայել Մայր աթոռի աղատության համար և եթե այժմ անհնար է այդ, ապա խնդրել կայսրին իր հովանավորությունը տարածելու Աթոռի վրա՝ հանուն գրություններ հղելով շահին ու թագաժառանգին, հանձնարարելով Պարսկաստանում ռուսական դեսպանին այդ գործում մշտական օժանդակություն ցույց տալու համար¹⁰⁰:

Այո, Ներսեսը շատ էր մտահոգված Աթոռի ճակատագրով: Երբ վրաստանի կառավարչապետը այցելել է նրան և առաջարկել, թե ինչ շքանշանով կցանկանար պարգևատրվել, Ներսեսը պատասխանել է, որ ցանկանում է Աթոռի պաշտպանությունը, իսկ շքանշանը Աթոռի պաշտպանություն չի նշանակում¹⁰¹: 1816 թ. հուլիսի 8-ի կաթողիկոսին գրած նամակում նա հայտնում է, որ նոր կուսակալը (Երմոլովի մասին է խոսքը—Կ. Հ.) շահի մոտ է գնալու, և խորհուրդ է տալիս պատշաճ ընդունելություն ցույց տալ¹⁰²: էջմիածնում կատարում են Աշտարակեցու պատվերը. Երմոլովը լավագույն ընդունելություն է արժանանում¹⁰³, չերմ ձառ է արտասանում Եփրեմ կաթողիկոսը ռուսական դեսպանության գալստյան առթիվ¹⁰⁴: Եվ այս տեղի էր ունենում այն պայմաններում, երբ էջմիածինը պարսկական գերիշխանության տակ էր, երբ թագաժառանգը միաբանությունից շահի աթոռի նկատմամբ հավատարմության երդում էր վերցրել:

Պարսկական իշխանությունները թեև լուրջամբ ընդունեցին հայոց կաթողիկոսի և էջմիածնի հոգևորականության՝ ռուսական ներկայացուցիչների նկատմամբ ցուցաբերած այդպիսի վերաբերմունքը, բայց հազիվ թե նրանց համար տանելի լինեին Աթոռի դեպի ռուսները տածած քաղաքական հակվածության այդօրինակ ցուցադրումը:

Երևանի սարգարը, դիվանագիտական նկատառումներով, թեև

100 Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, Թղթ. 164ա, վավ. 55:

101 Նույն տեղում, Ա. Երեցյանի արխիվ, Թղթ. 159, վավ. 106:

102 Նույն տեղում, Ն. Աշտարակեցու արխիվ, Թղթ. 164բ, վավ. 1014:

103 Նույն տեղում, Թղթ. 26, վավ. 1375:

104 Նույն տեղում, կաղարչանների արխիվ, Թղթ. 105, գ. 13, վավ. 1:

քաղաքական բացահայտ ճնշում չգործադրեց Մայր աթոռի վրա, բայց տնտեսական ճնշումը չափից անց էր ու անտանելի: «Էջմիածնին պատկանող գյուղերը ուշագրություն արժանի են իրենց հարստությունից: Հիրավի, այստեղ վաղուց մի ծաղկող քաղաք պիտի դառնար, եթե պարսկական կառավարությունը թույլ չտար Երևանի նահանգի կառավարչին ըստ կամս կողոպտելու վանքը: Ես համոզված եմ, որ թագավորը, որ մեծ ու պատվավոր մտքի տեր է, անտեղյակ է այս հրեշի (Երևանի սարդարի) արարքներին, եթե ոչ մինչև հիմա այս շրջանի բնակիչներին ազատած էր նրա կամակոր բռնություններից»¹⁰⁵, — այսպես էր գրում Երմոլովի դեսպանության անդամ, ռուսական բանակում ծառայող գերմանացի սպա Մորից Ֆոն Կոցերուն:

Երևանի խանը, իրավ, ուներ որոշակի անկախություն, մեծ մասամբ ինքնուրույն էր գործում: Սակայն նրա գործողություններին հազիվ թե անտեղյակ լինեին շահն ու թագաժառանգը:

Սարդարի կողմից հետզհետե սաստկացող տնտեսական ճնշումներն էին, որ հարկադրեցին Եփրեմին գրելու Ներսես Աշտարակեցուն, թե հարկ է մտածել նոր կաթողիկոսի մասին, այլապես ինքը հրաժարական կտա (1820 թ. հունվար)¹⁰⁶:

Ներսեսը դեմ արտահայտվեց կաթողիկոսի այդօրինակ վճռին, միաժամանակ հուսադրելով Էջմիածնի պարտքերի թեթևացման վերաբերյալ խոստումով¹⁰⁷:

Եփրեմի կաթողիկոսացման համար քիչ ջանքեր չէր թափել Աշտարակեցին, թեև ռուսների համար ցանկալի թեկնածու էր նա: Իսկ այժմ, իրադրությունների այսպիսի պայմաններում, բոլորովին ձեռնադրված էր կաթողիկոսի հրաժարականը: Խնդիրն ուներ հեռահար նշանակություն. Էջմիածնի գահակալը և Էջմիածինն ընդհանրապես նշանակալից դեր էին կատարելու Հայաստանի աղաւթագրման գործում, եթե ծագեր ռուս-պարսկական մի նոր պատերազմ: Թեև խաղաղ տարիներ էին, բայց Աշտարակեցին ցանկանում էր ռուս-պարսկական մի նոր բախում¹⁰⁸:

Ինչևէ, Եփրեմը վարվում է այլ կերպ. 1821 թ. վերջերին, վանքի պարտքերը մարելու նպատակով, թողնում է Աթոռը և անցնում ռուսաց սահմանը՝ Շուշի: Այս քայլը բացահայտում է ռուսական կա-

105 Հակոբյան Հովհ., Ուղեգրություններ, հատ. 2, Երևան, 1934, էջ 529:

106 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 38., վավ. 24:

107 Նույն տեղում, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 314:

108 Նույն տեղում, թղթ. 165, վավ. 314:

ռավարող շրջանների հայոց կաթողիկոսի նկատմամբ ունեցած վերաբերմունքի մի քանի կողմերը:

Հովակիմ Լազարյանին գրած նամակում ներսևոր աննպատակ է համարում Եփրեմի այդ քայլը և հայտնում, թե փոխկուսակալ Վեփրամինովը՝ դիտավորություն ունի նրան ետ վերադարձնելու¹⁰⁹: Կաթողիկոսի այդ վարմունքը Աշտարակեցուն դուր չի եկել, և նա ափսոսանք է հայտնում իր ջանքերի համար¹¹⁰: Նա, հավանաբար, երկյուղ էր կրում, որ էջմիածնում Եփրեմի բացակայության պատճառով կարող են այնպիսի փոփոխություններ կատարվել, որ նպատավոր չլինեին հայ ժողովրդի շահերից բխող իր ծրագրերն իրականացնելու համար:

Վրաստանի կառավարչապետ Երմոլովի համար ցանկալի չէր Եփրեմի Ղարաբաղ անցնելը: Նա, թեև պահպանելով քաղաքավարական կանոնները, հասկացնում էր կաթողիկոսին՝ վերադառնալ Աթոռ, որպեսզի պարսիկների մոտ կասկածի տեղիք չտրվի, քանի որ «այստեղի (Անդրկովկասի— Կ. Հ.) ղեկավարությունը ամեն մի հնարավոր միջոցի դիմում է ամրացնելու բարեկամական հարաբերությունները Պարսկաստանի հետ»¹¹¹:

Եփրեմը, ի պատասխան Երմոլովի պահանջ-նամակին, մի խնդրագիր է ուղարկում՝ վերջինիս, բացատրելով իր վերադարձի անհնարին լինելը¹¹²: Ցարիզմի քաղաքական ձգտումները այժմ էլ պահանջ են թելադրում պարսիկների հետ խաղաղ հարաբերություններ: Եթե նախկինում հայոց կաթողիկոսի առիթով նույնիսկ ռազմական բախման հարց էր առաջ գալիս, այժմ, ընդհակառակն, էջմիածնի գահակալը իր Աթոռը պետք է վերադառնա պարսիկների կասկածը չշարժելու համար:

Իրարանցում է առաջանում ռուսական կողմում: Երմոլովը շտապում է գրել կոմս Նեսեյրոդին, հայտնելով, որ Եփրեմը, նախապես տեղյակ՝ չպահելով, ժամանել է Ղարաբաղ և հայտարարում է, թե ինքը փախել է պարսկական ճնշումներից, եկել նորին գերազանցության հովանավորության տակ, ցանկանում է Թիֆլիս գալ: «Բայց ես,— ավելացնում է նա,— աշխատում եմ առիթ չտալ... պարսիկների հետ բարեկամության և վստահության խախտմանը»¹¹³:

¹⁰⁹ Նույն տեղում, թղթ. 165, վավ. 498:

¹¹⁰ Նույն տեղում, կաթ. դիվան, թղթ. 42, վավ. 20 ա:

¹¹¹ ЦГИА, ф. 880, оп. 5, д. 385, л. 1.

¹¹² Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 42, վավ. 26:

¹¹³ АКАК, т. VI, ч. I, стр. 450.

Հարցին ինչպե՞ս վերաբերվեցին Ռուսաստանի մայրաքաղաքում: Յարիզմի քաղաքական կուրսը նույնն էր թե՛ կենտրոնում, թե՛ Անդրկովկասում և թե՛ ամենուր: Ստացվում է նեսեյրոզի պատասխանը. ոչ մի գոհացուցիչ բառ Եփրեմի օգտին: Նա հայտնում է, որ նորին մեծությունը չի ցանկանում պարսիկների հետ հարաբերությունների վատացում, իսկ եթե հայոց կաթողիկոսը չի ուզում Աթոռ վերադառնալ, կարող է մնալ ռուսաց սահմանում, ուր որ ցանկանա, բայց որպես սովորական հոգևորական¹¹⁴:

Մայրաքաղաքից ստացված հրահանգների համաձայն, փոխկուսակալ Վելիամինովը 1822 թ. հունիսի 4-ին արքեպիսկոպոս Ներսեսին գրում է, թե ռուսաց կառավարությունը Եփրեմին այլևս չի կարող թողնել իր սահմաններում, երբ նա կրում է «պատրիարք» կոչումը, նա կարող է մնալ ռուսաց սահմաններում որպես սովորական հոգևորական¹¹⁵, եվ Ներսեսի այն գրությունը, թե Եփրեմ կաթողիկոսը ցանկանում է գնալ Ելիզավետպոլ¹¹⁶, Վելիամինովը պատասխանում է, որ այդ դեպքում նա շքախումբ չպետք է ունենա, երմոլովը թույլատրում է միայն այս պայմանով¹¹⁷:

Այսպիսով, պարզ էր Եփրեմի անելիքը՝ հա չվերադառնալ, նշանակում է հրաժարական տալ: Եվ 1822 թ. հունիսի 20-ին Եփրեմը ստորագրում է իր հրաժարականը¹¹⁸: Հրաժարականի տակ ստորագրում են նաև սինոդի անդամներ Մարտիրոս, Անտոն, Հովհաննես եպիսկոպոսները և Ներսես Աշտարակեցին: Այս հետևում է կաթողիկոսի հրաժարականը՝ ուղղված Ալեքսանդր Առաջինին¹¹⁹, իսկ մյուսը՝ Աբաս-Միրզային¹²⁰: Վերջում նշում է իր զառամյալ հասակը (72 տ.), լսողությունից ու տեսողությունից համարյա զրկված լինելը, միաժամանակ խնդրում է, որ թագաժառանգը բարեհաճ լինի Աթոռի նկատմամբ:

Եփրեմի հրաժարականին Ռուսաստանի մայրաքաղաքից չպատասխանեցին: Ա. Երիցյանը ենթադրում է, թե պատճառը Ներսեսին էր¹²¹: Հրաժարականից հետո էլ Եփրեմը բոլոր գրություններում ու

114 Նույն տեղում, էջ 451:

115 Նույն տեղում:

116 Նույն տեղում, էջ 451—452:

117 Նույն տեղում, էջ 454:

118 Մատենադարան, կաթ, դիվան, թղթ. 42, վավ. 30:

119 Նույն տեղում:

120 Նույն տեղում, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 244, վ. 250:

121 Երիցյանց Ա., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 217:

կոնգրակներում ստորագրում էր՝ «Ամենայն հայոց կաթողիկոս»։ Սակայն մի հանգամանք պարզ է, որ ուսաները շահագրգռված չէին ինտենսիվ կերպով հետաքրքրվել հայոց կաթողիկոսի հրաժարականի կամ նոր կաթողիկոս ընտրելու հարցով։ Դա էլ էր բխում նրանց քաղաքական շահերից։ Այդ է, հավանաբար, պատճառը, և ոչ ներսեսը, որ Եփրեմը մինչև Աթոռ վերադառնալը (նա էջմիածին եկավ, երբ Երեւանի խանությունն արդեն գտնվում էր Ռուսաստանի տիրապետության տակ), մնաց որպես հայոց կաթողիկոս։

Հետաքրքրական է, որ Եփրեմի Աթոռ վերադառնալու խնդրում իր վերաբերմունքը ցույց տվեց նաև պարսկական կողմը, թեև նպատակը ղեկանադիտական էր։ Կաթողիկոսին է գրում Երեւանի սարգարը, որը նախապես համոզում էր նրան ուսաց սահմանն անցնել և հանգանակությունների գնով Աթոռի պարտքերը մարել, այժմ այլ կերպ է վարվում՝ Եփրեմին հրավիրում է Աթոռ, գրելով. «...դիմելօվ առ պայծառափայլ իշխանին ուստաց և ազգն հայոց որ քրիստոնեայք և խաչապաշտ գոլով ի դիմաց պարտուց քոց օգնութեան առ քեզ ահա երկար ժամանակ եղև քան զտարին աւելի որ զնացեալ ես և տարակուսեալ կաս ի դրան ուստաց և հայոց և ոչ ինչ օգնութիւն եղև քեզ, մեք քո աշդպիսի վարանեալ տարակուսեալ մնալդ չեմք կամիլ... ահա գրեմք առ քեզ զի վերադարձիս առ աթոռն էջմիածնի»¹²²։ Մի այլ նամակում սարգարը հուսադրում է Եփրեմին, որ էջմիածնի պարտքերը տարիների ընթացքում կկարգավորվեն, ապա նորից հորդորում Աթոռ վերադառնալ¹²³։ Վերոհիշյալ նամակների հեղինակը այն մարդն է, որի գործակալ Ջաֆար-խանը հենց վերջին շրջանում երկու անգամ անասելի բռնություններ էր կատարել էջմիածնի միաբանութեան նկատմամբ, և նրա կողոպտիչ քաղաքականութեան պատճառով էր, որ 365, 845 ռ. 90 կ. (երեւանյան արծաթով) պարտքի դիմաց հինգ տարվա ընթացքում մարվել էր 355, 363 ռ. 25 կ. ու նորից եկեղեցու վրա պարտք էր մնացել ավելի քան 320 հազար ռուբլի¹²⁴։ Սարգարի նամակները արեւելյան կեղծավորութեամբ գրված փաստաթղթեր էին, մի ծայրով էլ ուղղված ուսաների դեմ։

Ինչ վերաբերում է Աբաս-Միրզային, ներսեսը գտնում էր, թե նա անտեղյակ է էջմիածնի նկատմամբ Երեւանի խանի ճնշումնե-

122 Մատենադարան, կաթ. ղիվան. թղթ. 44, վավ. 350.

123 Նույն տեղում, թղթ. 45, վավ. 10.

124 АКАК, т. VI, ч. I, стр. 455—456.

րին¹²⁵։ Այդ կարծիքը պարզ երևում է թագաժառանգին գրած նրա բողոք-նամակում, ուր հեղինակը մեկառմեկ թվելով խանի գործակալների բռնություններն ու կողոպուտը Աթոռի նկատմամբ, միաժամանակ ավելացնում է. «Եւ ես բաղում յուսով իմով վասն բարերար հովանաւորութեանց շահգատային ի վերա Աթոռոյ էջմիածնի, և Աթոռոյ նորա վայելուչ հոգացողութեանցն վասն ամենայն զրկանաց և չափշտակութեանցն ի պարտուց, եմ և մնամ յաւիտենական պարտաւորութեամբ իմով աղոթաբար»¹²⁶։

Ներսեսի այս նամակը դիվանագիտական մղումի՞ց էր գրված, թե՞ հեղինակի Աբաս-Միրզայի նկատմամբ ունեցած դրական համոզմունքի պատճառով։ Մեր կարծիքով, երկրորդը ավելի հավանական է, քանի որ Աբաս-Միրզայի մոտ ուղարկված իր ներկայացուցչին՝ Հաղպատի արքեպիսկոպոս Մարտիրոսին (վերջինս արդեն գտնվում էր Թավրիզում) Ներսեսը, թեև արդեն մանրամասն գրել էր, վերստին տեղեկություններ է ուղարկում, նկարագրելով սարդարի և Զաֆար-խանի նոր չարագործություններն ու սպառնալիքները ու պատվիրում՝ դրանց մասին էլ հայտնել թագաժառանգին¹²⁷։ Ուրեմն, Ներսեսը հավատ ուներ Աբաս-Միրզայի նկատմամբ աթոռի վիճակը թեթևացնելու հարցում։ Սակայն Աշտարակեցին քիչ ուշ (24/3—1824 թ.) Զմյուռնիայի առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոսին գրում է, որ իր հույսը Աթոռի հոգսը թեթևացնելու հարցում թագաժառանգի վրա չի եղել¹²⁸։ Եթե այդ այդպես էր, ապա ինչպե՞ս մեկնաբանել Ներսեսի՝ Խաչատուր Ղաղարյանին գրած (1/10—1823 թ.) նամակի բովանդակությունը, ուր, իմիջիայլոց, գրում է. «Մերազանազոյն կայ ի Հաղբատ և մեք ի մասին նորա նոր այժմ ի 13 անցեալ ամսեանն սեպտեմբերի մատուցեալ զխնդիր առ կուսակալն խնդրեցաք զմիջնորդութիւն նորա առ կայսր և առ տէրութիւն պարսից վասն ազատելոյ զաթոռն էջմիածնի և զպատրիարզն և զամենայն հոգևորական նոցին ի բռնակալութիւնից անտի իշխողաց երևանու և ի ծանրութիւնից պարտուցն, զոր ի նորին բարձր գերազանցութիւն առաքելաց առ նորին Կ. Մեծութեան ի 22 նորին ամսոյ»¹²⁹։

Այո՛, Ներսեսը հույս է ունեցել, որ շահը կամ շահագրեւն, թե-

¹²⁵ Նույն տեղում։

¹²⁶ Համառոտութիւն անցից Քրիստոսակերտ Մայր Աթոռոյ հայոց սրբոյ էջմիածնի, Ի Տփլիս, 1853, էջ 11—21։

¹²⁷ Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 165, վավ. 833։

¹²⁸ Նույն տեղում, թղթ. 166, վավ. 35։

¹²⁹ Նույն տեղում, թղթ. 165, վավ. 783։

կուզ ուսաց կայսրի միջնորդությամբ, կթեթեացնեն էջմիածնի գրությունը:

Ահա թե ի՞նչ է պատասխանում Ներսեսին խորամանկ ու դիվանագետ թագաժառանգը: Նա գրում է, որ շատ է տխրել Աթոռի վերաբերյալ այդպիսի տեղեկությունների պատճառով, խորհուրդ է տալիս՝ տարին երկու անգամ կաթողիկոսի կողմից մի վարդապետ թող գա պատմի Աթոռի հոգսերի մասին: Աբաս-Միրզան էջմիածնի նկատմամբ իր վերաբերմունքը բացատրում է իր անտեղյակությամբ. «Նա յաղագս ամենայն անցից Աթոռոյ նփրեմ հպիսկոպոսին է յանցանքն, որ գոլով անդէն ընդհանուր գործակատար ու կառավարիչ՝ ոչ է գրեալ մեզ զայնպիսեաց մինչև ցայսօր, որում պատուիրեցի աշխատանքս խնդրագրով յետ աշտորիկ զամենայն որպիսութեանց Աթոռոյն»¹³⁰:

Ներսեսին գրած մի այլ նամակով Աբաս-Միրզան հայտնում է, որ թեթեացրել է էջմիածնի պարտքերի տոկոսները, ասպա առաջարկում է՝ երկու հոգի ուղարկել էջմիածին իր ներկայացուցիչների հետ այդ պարտքերի վերաբերյալ վերջնական մի որոշում հանելու¹³¹:

Ինչպես երևում է, էջմիածնից էլ էր պատգամավորություն զնացել թագաժառանգի մոտ (նփրեմ արքեպիսկոպոսը)¹³² և, ըստ միաբանության անդամների՝ Սահակ, Ստեփանոս, Փիլիպոս, Բարսեղ արքեպիսկոպոսների հայտարարության, Աբաս-Միրզան բավարարել է նրանց պահանջները¹³³: Թե թագաժառանգի կողմից ինչպիսի հոգատարություն է ցույց տրվել Մայր աթոռի նկատմամբ կամ էջմիածնի պարտքերի վերաբերյալ նրա հրովարտակր ինչ արժեք ունեն, զժվար չէ ենթադրել Ներսես Աշտարակեցու՝ Զմյուռնիայի առաջնորդ Ստեփանոս արքեպիսկոպոսին գրած նամակից. «Մարտիրոս գերապատիւ արքեպիսկոպոսն... վերադարձեալ եկն ողջութեամբ՝ ունելով պատասխանք ըստ նախնի պարսկական կերպի զհրովարտակս բառագրով աննյութ հիւսուածոց առ Նորին վահագետութեան և առիս»¹³⁴: Այստեղ արդեն Ներսեսի կողմից հիասթափություն է նկատվում թագաժառանգի նկատմամբ: Նա ծաղրում է աթոռականներին (Անդրեաս, Սահակ, Փիլիպոս, Ստեփանոս, Բարսեղ արքեպիսկոպոսներին) Աբաս-Միրզայի նկատմամբ տածած

130 Համառոտութիւն անցից Քրիստոսակերտ Մայր Աթոռոյ հայոց սրբոյ էջմիածնի, Ի Տփլիս, 1853, էջ 25—27:

131 Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 45, վավ. 80:

132 Նույն տեղում, թղթ. 166, վավ. 27:

133 Նույն տեղում:

134 Նույն տեղում, վավ. 35:

հավատի համար¹³⁵ և հեղինորեն շնորհավորում է Եփրեմ արքեպիսկոպոսին Աթոռի կառավարիչ նշանակվելու առթիվ, հայտնելով, որ այլևս ինքը Աթոռի հետ ոչ մի առնչություն չի ունենալու¹³⁶:

Եփրեմ արքեպիսկոպոսին Աթոռի կառավարիչ նշանակելով, հավանաբար, Աբաս-Միրզան ցանկացել է հակադրություն առաջացնել Ներսեսի և Աթոռի միջև: Ինչպես տեսանք, Աշտարակեցին դեմ արտահայտվեց այդ պաշտոնին Եփրեմի նշանակվելուն:

Այսուհանդերձ, պարսկական կողմի համար Եփրեմ կաթողիկոսի հարցը մնում էր դիվանագիտության օրակարգում: Հասան խանը նորից է հորդորում կաթողիկոսին Աթոռ վերադառնալ, խոստանում է նաև վճարել էջմիածնի պարտքի մի մասը¹³⁷: Որպիսի՞ մեծահոգություն: Սակայն նրա նպատակը այլ էր, պարզ ու ակնհայտ... Եթե հրաժարվել ես,—գրում է նա,— ապա ուղարկիր կաթողիկոսական մատանի-կնիքը¹³⁸: Սարդարը ղգալով այս բնագավառում (գրագրություններ, հորդորանք) իր ջանքերի անօգուտ լինելը, 1824 թ. ամռանը որոշում է կաթողիկոսին Հաղպատից փախցնել¹³⁹: Ռուսներին դա, իհարկե, ձեռնադրելու: Դրա համար էլ կաթողիկոսի բնակեցված կողմերում կասկածելի մարդկանց նկատմամբ հսկողությունն ավելացնելու կարգադրություն է արվում¹⁴⁰:

Երևանի խանի դիտավորության մասին Ներսեսը գրում է Հարություն խուզաբաշյանին, որ «...Սարդարն Երևանու դարանակալ ի գաղտնի խորհրդոց իւրոց. ջանայ նախ արկանել ի ձեռս ղնորին ծնրունադարգ օծութեան»¹⁴¹:

Ջնայած կաթողիկոսին էջմիածին վերադարձնելու հարցում պարսից կողմի կրած անհաջողություններին, չի գաղաբեցվում այդ խնդրի վերաբերյալ Եփրեմի մոտ նոր պատգամավորությունների առաքելումը¹⁴²: Մի առիթով Ներսեսը գրում է, որ կուսակալը շահ-ղադեի երաշխավորությունն է պահանջել Աթոռի և կաթողիկոսի ապահովության համար¹⁴³: Իրոք, Երմուլովը նամակ էր ուղարկել շահզադեին, որում կային հանդիմանական խոսքեր, որ պատրիար-

135 Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, Թղթ. 166, վավ. 27:

136 Նույն տեղում, Թղթ. 166, վ. 37:

137 Մատենադարան, կաթ. դիվան. Թղթ. 53, վավ. 2:

138 Նույն տեղում:

139 Երիցյանց Ա., Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 223:

140 АКАК, т. VI, ч. I, стр. 456.

141 Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, Թղթ. 166, վ. 98:

142 Նույն տեղում, կաթ. դիվան, Թղթ. 48, վավ. 34:

143 Նույն տեղում, Թղթ. 49, վ. 377:

քի հովանավորութիւնն ու նրա ժողովրդի ազատութիւնն ու ապահովութիւնը շահագրեի կողմից մի այլ երկրի միջնորդութեամբ չպետք է լինի¹⁴⁴։

Դիվանագետ Աբաս-Միրզային ինչ էր մնում անել, եթե ոչ ցույց տալ, թե ինքը բարեհաճ է Աթոռի նկատմամբ, թե այսուհետեւ Եփրեմը կարող է անհոգ լինել իր հովանավորութեան շնորհիւ։ Նա ներսսսին ուղղված հրովարտական այսպես է գրում. «Այլև վասն սրբոյ էջմիածնի պատկանեալ բոլոր գործոցն որպէս հրամայեալ եմ մեծադահ ֆաթալի խանի, ունի պատմել ձեզ զամենն և դաշինս հաստատել ընդ ձեզ։ Ըստ որոյ ուրեմն դուք հաւատալով ամենայն միամտութեամբ բանից և ասուեաց նորին՝ վերադարձուաջիք զկաթողիկոսն. և զիմ խնամքն առ ձեզ՝ կատարաւ ծանխաջիք»¹⁴⁵։

էջմիածնից Եփրեմի բացակայութիւնը զգալի էր Երեւանի սարգարի համար նաև տնտեսական առումով։ Որքա՛ն էր նա քամում էջմիածնից, իսկ այժմ ցամաքել էր կողոպուտի աղբյուրը։ Սարգարի այս ձգտումը հայտնի էր ռուսներին։ Նեսելրոդեին ուղարկած զեկուցագրում Երմոլովը մասնավորապես կանգ է առնում այս երևույթի վրա, նշելով, թե իր ախորժակին հագուրդ տալու համար է սարգարը ետ կանչում Եփրեմին¹⁴⁶։

Այս ընթացքում, երբ Աթոռն ու նրա զահակալը նորից էին դարձել ռուս-պարսկական դիվանագիտութեան առարկա, էջմիածնում գտնվեցին մարդիկ, որոնք իրենց փառասիրութեանը հագուրդ տալու համար ստեղծել էին մի խառը իրավիճակ։ Հավանաբար, Հովհաննես Կարբեցի արքեպիսկոպոսը, նկատի ունենալով սարգարի իր նկատմամբ ունեցած համակրանքը (կեղծ և քաղաքական մղումով սակայն), ակնկալութիւն է ունեցել կաթողիկոս դառնալու։ Այդ պարզ երևում է Կարնո Կարապետ արքեպիսկոպոսին Կարբեցու գրած նամակից, ուր ասվում է, որ ներսես Աշտարակեցին զայրանում է, երբ լսում է սարգարի կողմից իր մեծարվելն ու իրեն կաթողիկոս դարձնելու նրա ցանկութիւնը¹⁴⁷։ Սարգարի հորդորանքով և Կարբեցու ջանքերով է, ըստ երևույթին, կազմվել նոր կաթողիկոս ընտրելու վերաբերյալ միաբանութեան համախոսականը ու Հովհաննես եպիսկոպոսի ձեռքով ուղարկվել Պոլիս, որը բանադրվել է կաթողիկոսի և ներսեսի կողմից (1824 թ. դեկտեմ-

¹⁴⁴ АКАК, т. VI, ч. II, стр. 307.

¹⁴⁵ Մատենադարան, կաթ. դիվան, Բղթ. 43, վ. 181։

¹⁴⁶ АВПР, ф. Армянские дела, д. I, л. 64.

¹⁴⁷ Մատենադարան, Կարապետ արքեպիսկոպոսի արխիվ, Բղթ. 163ա, վավ. 723։

բեր)¹⁴⁸։ Հովհաննէս Կարբեցու այդ արարքների մասին է, անշուշտ, ներսեսը գրում՝ «Սարտարն և Հասան խանն վերստին իշխեն Երեւանու, Կարբեցի եղբայրն դաշնակցեալ ընդ սատանայի Դաւիթ երկրորդ կամի յայտնել դանձն իւր»¹⁴⁹։

Եթէ սարդարի համախոհությամբ էջմիածնի միաբաններից ոմանք համախոսական ուղարկեցին Կ. Պոլիս, ապա ներսեսը, կաթողիկոսի անունից անշուշտ, այնտեղ է ուղարկում Կարնեցի արքեպիսկոպոսին. «... ընտրելի համարեցաք յղել յանդերձ պատկանաւոր գրովք կաթողիկոսին և տետրակին տպեցելովք զՍտեփանոս արքեպիսկոպոս կարնեցի, ընկալեալ վասն նորա զգիր յանձնարարութեամբ կուսակալին առ դեսպանն ռուսաց ի Պոլիս»¹⁵⁰։

Այս գրությունն է, մեր կարծիքով, հարկադրում պատրիարքին կայացնելու հետեւյալ որոշումը՝

ա) Առաջմ հետաձգել նոր կաթողիկոսի ընտրությունը, դադարեցնել էջմիածնին նվիրատվությունները։

բ) Մինչև նոր տնօրինություն՝ Թուրքիայի հայկական եկեղեցիներում պատարագի ժամանակ չհիշատակել կաթողիկոսի անունը¹⁵¹։

Իրադրությունների այսպիսի ընթացքը ձեռնառու չէր ռուսական կողմին։ Թե՛ Երմոլովը և թե՛ նրա խորհրդով Կոստանդնուպոլսում ռուսաց դեսպանը, ինչ խոսք, դեմ կնարտահայտվեին պարսիկների համախոհությամբ կաթողիկոսական աթոռի համար առաջադրվող յուրաքանչյուր թեկնածուի։ Նույն Երմոլովը, որ մի ժամանակ առաջարկում էր Եփրեմին կամ Աթոռ վերադառնալ, կամ հրաժարական տալ, այժմ այլ դիրք է գրավում։ Նպատակը պարզ է, չլինի թե պարսիկները կաթողիկոս դարձնեն ռուսաց ոչ հավատարիմ մի հոգեւորականի։

Այսպիսով, Եփրեմը թեև իր պաշտոնավայրում չէր գտնվում, բայց մնում էր որպես հայոց կաթողիկոս։ Նրա Աթոռ վերադառնալու կապակցությամբ բանակցություններ ու գրությունների փոխանակություններ հաճախակի էին տեղի ունենում։

Ինչպես հայտնի է, ռուս-պարսկական առաջին պատերազմն ավարտվեց Գյուլիստանի հաշտության պայմանագրով (1813 թ.), ըստ որի Պարսկաստանը Անգրկովկասում բավականաչափ հողա-

148 Նույն տեղում, թղթ. 163բ, վավ., 741։

149 Նույն տեղում, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 164 ա, վավ. 391։

150 Նույն տեղում, թղթ. 166, վավ. 194։

151 Նույն տեղում, Կարապետ արքեպիսկոպոսի արխիվ, թղթ. 163 բ, վավ. 762։

յին տարածութիւնից զրկվեց: Պարսկական կողմը ներքուստ չէր հաշտվում այդ պայմանագրի արդյունքների հետ: Պարսկաստանում, հատկապէս կրօնական շրջաններում, տարվում էր հակառուսական պրոպագանդա: Այս հարցում պակաս դեր չունեին անգլիական դիվանագիտութիւնը: Միջոցառումներ արեցին Սրեկեքի այդ երկրում, երբ տեղի ունեցավ ղեկաբերիստների ապստամբութիւնը, որի լուրը հիպոթեզով չափեր ընդունելով հասավ Պարսկաստան: Ռուս-պարսկական սրերի խաչաձեւման պատճառը կար, և առիթն էլ ներկայացավ: Թեև ղեկաբերիստների ապստամբութիւնը անմիջապէս ճնշվել էր և Պարսկաստան էր ուղարկվել իշխան Մենշիկովի ղեկաւնութիւնը, սակայն անհնար էր արդեն զրութիւնը փոխել:

1826 թ. հուլիսի 16-ին Երևանի սարգարի եղբայր Հասան խանի զորքերը ներխուժեցին Շորագլայի և Փամբակի սահմանները, նույն օրը Աբաս-Միրզայի 60-հազարանոց բանակը անցնում է Ղարաբաղ, ապա պաշարում Շուշին: Շուշու 44-օրյա պաշարման օղակում իր խիղախությամբ փախլեց ռուսական կայազորը (1700 զինվոր) զոհապետ Ռուստի գլխավորությամբ: Բերդի պաշտպանությանը մասնակցում էին 1500 զինված հայ մարտիկներ, ընդհանրապէս բերդի ամբողջ հայ ազգաբնակչութիւնը:

Ռուս-պարսկական երկրորդ պատերազմն ընդհանրապէս հայ և ռուս ժողովուրդների անխախտ բարեկամության, մասնավորապէս արեւելահայության ռուսական անվարան կողմնորոշման բաղմապան դրսևորումների փորձութիւնը դարձավ: Արեւելահայ աշխատավորական զանգվածները պատերազմի ողջ ընթացքում ամենօրյա օգնութիւն են ցույց տվել ռուսական զորքին: Այդ գործում պակաս չէր նաև, այսպէս կոչված, արեւելահայ վերնախավի դերը: Իսկ այդ խավի ներկայացուցիչներսես Աշտարակեցին, իրավամբ, դասվում է հայ ազատագրական շարժման մեծ երախտավորների շարքը:

Բավական է ծանոթանալ ներսեսի 1826 թ. հուլիսի 29-ին գրած դիմում-հորդորին¹⁵², որպէսզի պարզ լինի հայ-րենի երկրի ազատագրման համար նրա մեծ նախանձախնդրութիւնը, ռուսական հաստատուն կողմնորոշումն ու հավատը ռուսական զենքի հաղթանակի նկատմամբ: Ռուսական հարձակումների ժամանակ նա առաջապահ զորագնդի հետ էր:

Իսկ ինչպե՞ս էր զրութիւնը էջմիածնում և ի՞նչ նշանակութիւն ունեւր այն:

Պատերազմի սկզբնական շրջանում Երևանի սարգարը, էջմիած-

¹⁵² ЦГИА, ф. 880, оп. 5, д. 18, лл. 2—7.

նի ռուսական օրինենտացիա ունենալու պատճառով, էջմիածնահայա-
տակ հայ գյուղերի բնակիչներին ղենքի ուժով Երևան է քշում, ինչ-
պես և միաբանության շատ ներկայացուցիչների այնտեղ հավաք-
վելու հրաման արձակում¹⁵³:

Իսկ սարդարի եղբայր Հասան-խանը պատրաստ էր այրելու
մայր տաճարը¹⁵⁴, և եթե այդ չիրականացավ, պատճառը մի քանի
նշանավոր մահմեդականներն էին, որոնք նրան բացատրել են այդ
դիտավորության վտանգավորությունը, օրինակ բերելով այն փաս-
տը, թե ռուսները երկու անգամ պաշարել են Երևանի բերդը և չկա-
րողանալով այն գրավել, վերադարձել են իրենց սահմանը ձեռք
չտալով ո՛չ քրիստոնյաների, ո՛չ էլ մահմեդականների սրբավայրե-
րին:

Էջմիածնի դրությունը աննախանձ էր. ժողովուրդը զրկված էր
ամեն ինչից, նրա մի մասը քշվել էր Պարսկաստանի խորքերը, մի
մասն էլ Երևան:

Էջմիածինը, այս վիճակում էլ, հետաքրքրում էր Աբաս-Միր-
զային: Այդ է պատճառը, որ նա, նկատի ունենալով Եփրեմի ռու-
սական կողմնորոշումը, ցանկացել է անպայման էջմիածնում ընտրել
տալ մի այլ կաթողիկոս (Եփրեմը այդ ժամանակ Թիֆլիսում էր):
Պարսիկների համար այդ վերջին փորձն էր էջմիածնում պարսկոֆիլ
որևէ կաթողիկոս ընտրելու հարցում: Ապագա դործողությունները
այնպես զարգացան, որ էջմիածնի խնդրում անհնար դարձան պարս-
կական կողմի ձգտումներն ու ակնկալությունները:

Աբաս-Միրզան հիմքեր ուներ Եփրեմի նկատմամբ ունեցած իր
դիրքի համար: Վերջինս սկզբից ևեթ ռուսական կողմնորոշում ուներ,
այժմ էլ Թիֆլիսում, Ներսեսի հետ միասին, Պարսկաստանի մասին
օգտակար տեղեկություններ էր հայտնում ռուսական անդրկովկաս-
յան հրամանատարությանը¹⁵⁵:

1827 թ. ապրիլին ռուսական բանակը մտավ Երևանի խանու-
թյան սահմանները: Աղատարար զորքի մուտքը էջմիածնում ընդուն-
վեց հանդիսավորությամբ¹⁵⁶: էջմիածնի ցնծությունն այդ առթիվ
բնական էր: «... նուիրեցաք զարտուսուս ջերմեռանդությամբ Ամե-
նայն բարձրելոյ՝ օրհնելով զկէանս և զկամս իւրոյ կայսերական Մե-

153 ЦГВИА, Ф. ВУА, д. 894, л. 11 и об.

154 Նույն տեղում:

155 ЦГВИА, ф. ВУА, д. 4338, л. 25 об.

156 Семенов Л. С., К вопросу о значении Туркменчайского договора для истории Армении, «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 4, էջ 116:

ծովեան որով գտաք արժանացեալ մերոց բաղձանաց»¹⁵⁷, — այսպէս է գրում Ներսէսը: Տնտեսապէս քայքայման հասած Մայր աթոռը, այդուհանդերձ, ռուսական զորքին տրամադրեց 1200 փութ ցորեն և ալյուր, ավելի քան՝ 1000 թունդի գինի¹⁵⁸: Աթոռի ռուսաց զորքին օգնելու այլ փաստեր էլ շատ կան:

Ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ողջ ընթացքում Ներսէսի եռանդուն ջանքերն ու նպաստավոր գործունեութիւնը ուղղված էին ռուսական բանակի հաղթանակին: Այդ առումով ուշագրավ է խաչատուր Լազարյանի նամակը Աշտարակեցուն (2-ը օգոստոսի 1827 թ.), ուր հեղինակը մասնավորապէս գրում է, թե Ներսէսի վաստակը իր վրա է հրավիրել կայսրի և իշխանների ուշադրութիւնը¹⁵⁹:

Իրոք, ռուսների համար Ներսէսի բաղմօգուտ գործունեութիւնը գնահատվեց, նա արժանացավ Ալեքսանդր Նեսկու շքանշանին¹⁶⁰:

Սակայն, ըստ ամենայնի, գնահատվեց Ներսէս Աշտարակեցին: Այս հարցը կարևոր է: Հայտնի է, որ Թուրքմենշայի (1828 թ. փետրվարի 10) պայմանագրով Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին: Այժմ պարսկական իշխանութիւնները ոչ մի միջամտութիւն չէին կարող ցույց տալ հայոց կաթողիկոսական ընտրութիւններին: Հարց է ծագում, թե ռուսների հաջողութիւնների համար այնքան ջանք թափած ու հսկայական վաստակ ունեցող Ներսէս Աշտարակեցին ինչո՞ւ կաթողիկոս չառաջադրվեց, երբ կար նփրեմի հրաժարական դիմումը, ուր և առաջ էր քաշված նրա թեկնածութիւնը¹⁶¹: Ցարիզմի համար այլևս ձեռնտու չէր Ներսէսի նման գործիչ թողնել Հայաստանում, ուր մնաց կաթողիկոսական աթոռ տալու, Ներսէսը արդեն աքսորված էր Բեսարաբիա, և Ռուսաստանի կենտրոնից գաղտնի գրութիւններ էին ուղարկվում այնտեղ՝ վերջինիս վրա առանձին հսկողութիւն սահմանելու¹⁶², նրա գրութիւնները ուշադիր ստուգելու պահանջով¹⁶³:

Այո, ցարիզմի համար այլևս ձեռնտու չէր լայն ասպարեղ տալ Ներսէսին: Զարմանալի չէ, որ ասպարեղ է բացվում Հովհաննէս

157 Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ, 103, էջ 116, գ. 5, վավ. 229:

158 Նույն տեղում:

159 Նույն տեղում, թղթ. 106, գ. 51, վավ. 100:

160 Մատենադարան, կաթ. դիվան, թղթ., 24, վավ. 120:

161 Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի արխիվ, թղթ. 224, վավ. 259:

162 АВПР, ф. Армянские дела, д. 4, л. 17.

163 Նույն տեղում, թղթ. 1:

Կարբեցու՝ մի փառամուհ հոգեորականի համար, թեև անհայտ չէր
այն փաստը, որ վերջինիս ժամանակին կաթողիկոս է ցանկացել
դարձնել երեւանի խանը: Այս խնդրում ցարիզմը հետապնդում էր
նոր նպատակներ, որոնք մարմին առան «Պոլոթնիկ» անվամբ:

К. М. ОГАНЕСЯН

ЭЧМИАДЗИН, КАК ОБЪЕКТ РУССКО-ПЕРСИДСКОЙ ДИПЛОМАТИИ (1800—1828 гг.)

Резюме

В статье на основании фактического материала освещены политические намерения царской России и Персии в отношении Эчмиадзина, в частности, их стремления в вопросе избрания армянского католикоса. В вопросе Эчмиадзина политика России уже в первом десятилетии XIX века в отношении Персии (и не только Персии) увенчалась успехом.

Известно, что в начале XIX века имели место факты вовлечения Эчмиадзина в политический водоворот со стороны наполеоновской дипломатии. Эти стремления, к счастью, не оправдались. Успехи, достигнутые Россией в вопросе Эчмиадзина, обуславливались политической ориентацией восточных армян в отношении России.

Одновременно в статье выявлены некоторые стороны политической деятельности одного из крупных деятелей в армянском освободительном движении — Нерсеса Аштаракеци в годы его предводительства армянской епархией в Грузии.